



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

613.24

1067

1068

1069

197

110

10 #

Handwritten purple scribbles

Handwritten blue scribble

2010

104

ՔԱՆԻՄԻ ԽԻԽՈՍՔ

238

ՀՌՈՎՄԷԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԳԼԽԱԽՈՐՈՒԹԵԱՆ

ՄԱՍԻՆ.



Թ ա ղ ր գ Վ ա ն ի ղ թ ի ղ ն

(Изъ духовной беседы 1888 г.)

ՄՈՎՍԻՍԻ ՍՐԱՊԻՈՆԵԱՆ ԶՈՀՐԱՊԵԱՆՑ.

1861—Ռ Զ Թ.

ԹԻՖԼԻՉ.

103285-42

ПЕЧАТАТЬ ПОЗВОЛЯЕТСЯ

Съ тѣмъ, чтобы по отпечатаніи представлено было въ
Ценсурный Комитетъ узаконенное число экземпляровъ.
Тифлисъ 1го Юля, 1861 года.

Ценсоръ И. Кайтмазовъ.



2216-2007

«Ս.՝ր+ Էզթա՝ր+ և հա՝ր+ (Հրաձեռնեցի+) լաւարս՝ա+
Էն) -յէ՛ -ու Յեզ պարտախանարտ-ա-թխան,»:

Գործ. ԻԲ. 1.



Յիսուս Քրիստոս մեր Տէրը հիմնեց երկրիս վրա միմիայն
տաւրը եկեղեցի, որ և ահա մօտ երկու հազար տարի ժամանակ է՝
կայ ու մնում է հաստատուած . բայց սատանան , չունելով հնար
և կարողութիւն քանդելոյ նրան, կարաց միայն քրիստոնէից մէջ
ցանկ իւր որոմները , այն է՝ հերձուածք, աղանդք ու բաժան-
մունք, որովք քրիստոնեայք բաղկացել են արդէն առանձին ժո-
ղովուրդներ մինը քան զմիւսը առաւել կամ նուազ թուով և սրան-
ցից ամէն մինը ինքնիրան համարում է միմիայն ճշմարիտ եկե-
ղեցի Քրիստոսի: Չէ դժուարին բացատրել ապացուցութեամբ մո-
լորութիւնները այն քրիստոնէական դաւանութեանց կամ ժողո-
վրդոց, որք շատ ժամանակ չէ լոյս են ընկել, զուրկ են հնութեան
յատկութիւնից, անընդհատ յաջորդութիւնից առաքելական պաշ-
տօնի և քահանայութեան շնորհքից: Ս. յսպէս ահա քանի հարիւ-
րաւոր տարիներից հետէ հակառակ են կենում մինը ընդդէմ մի-
ւին արեւելեան եկեղեցին և նրանից բաժանուած արեւմտեանը .
Ինչպէս մէկը, նոյնպէս և միւսը քարոզում է ինքը զինքը միմիայն
ճշմարիտ և ուղղահաւատ. ամէն մինը առանձին առանձին յառաջ
էքերում արօցուցութեան համար իւր հնութիւնը, անընդհատ ու
յարատև յաջորդութիւնը ձեռնադրութեան , անքակտելի համա-

ձայնութիւնը նախնի ժամանակաց եկեղեցւոյ հետ՝ հաւատոյ վարդապետութեանց, խորհրդոյ և Աստուածաշտութեան մասին: Բայց ինչն է բաժանում նրանց մէկզմէկուց. նոցա տարածայնութեան և անմիաբան կարծեաց առարկայն ինչն է. կրօնական վարդապետութեան էութեանը՝ թէ միայն սահմանեալ կարգաց ճիշտ պահպանողութեան մասին է, այսինքն կառավարութեան ձևոյն, որ է արտաքին կողմն քրիստոնէական եկեղեցւոյն: Չզխան, դուք պապադաւանքդ ինչ ունիք ասելոյ և ինչ է ձեր դատողութիւնը սորա համար: Բայց նայելով նրան, որ ամենայն արևմտեան հեղինակները անուանում են արևելեան քրիստոնէայներին ոչ թէ հերետիկոսք, այլ միայն հերձուածողք, պէտք է համարել, որ արևելեան և արևմտեան եկեղեցւոյ մէջ անմիաբան կարծիքն՝ ձեր դատողութեամբն սահմանուած կանոնաց պահպանողութեան, կառավարութեան և արտաքին կարգաց է վերաբերում, և ոչ իսկական էութեան և հաւատոյ վարդապետութեանը:

Դուք ի հարկէ ցտնկանում էք խմանալ, թէ մեք արևելեան եկեղեցւոյ որդիք՝ միւս քրիստոնէայքս (Յոյնք, Հայք, Ասորիք, Վրացիք և ուրիշները) ինչպէս ենք մտիկ տալիս այն հարցմանը, որ բաժանում է մեզ ձեզանից: Ո՛ւնի սա մեզ համար հաւատոյ էական վարդապետութեան յարգ և վստմութիւնը, թէ մեք նմանապէս, ինչպէս և դուք, համարում ենք նրան հարցումն երկրորդ կարդի՝ սահմանադրած կանոնների, արտաքին բարեպաշտութեան և եկեղեցական կառավարութեան մասին: Մեք հետևելով մեր եկեղեցւոյ բնատուր ներողամտութեանն, զգուշութեամբ երկխոյն ենք կրում զնեւոյ որոյ և իցէ վրա անուն հերետիկոսի կամ հերձուածողի: Մեք միայն պարզ առանց ծածկելոյ ասում ենք, թէ այն առարկայն կամ պատճառն, որ հարկադրում է մեզ հեռանալ ուստարանալ Հռովմէական եկեղեցւոյ հետ միաբանութիւնից, վերաբերում է ոչ եկեղեցական սահմանադրեալ կարգաց պահպանողութեանն միայն, այլ և կրօնի՝ քրիստոնէական հաւատոյ էութեանը: Դուք ի հարկ է կարդացած կ'լինիք շատ հողեօր և աշխարհական անձանց այլ և այլ ժամանակի գրածները, որոց մէջ մանրամասն յիշուած են Հռովմայ եկեղեցւոյ մողորութիւնքն և որոց մա-

սին Արևելեան Պատրիարքունքն հարկադրուած հեռացրել են արևմտեան կամ Հռովմէական պատրիարքին իւրեանց միաբանութիւնից: Այն դրուածոց վրա աստ երկարաբանութեամբ խօսելին յնձ աւելորդ է թուում, ըստ որում գիտեմ, որ Հռովմայ եկեղեցին իւր մասնաւոր դատողութեանց և սովորութեանց վրա առանձին համարումն չունի և պատրաստ է հերքել և չըզուենել ոչ միայն նրանց, այլ և հաւատոյ հանգանակի մէջ յայտնի յաւելուածը, եթէ միայն մեք Հռովմայ եպիսկոպոսին համարենք զըլուխ ընդհանրական եկեղեցւոյն: Արեւմն՝ հարցումն, որ բաժանում է արևելեան եկեղեցին արևմտեանից այն միմիայն մասին է, թէ հարկ է համարել Հռովմայ եպիսկոպոսին զըլուխ ընդհանուր եկեղեցւոյն փոխանակ Յիսուսի Քրիստոսի, միմիայն անսխալ և անմոլար վարդապետ (ուսուցիչ) հաւատոյ, զլիաւոր իշխող և հոգևոր առաջնորդ կամ տէր ամէն միւս պատրիարքաց, եպիսկոպոսաց, քահանայից և աշխարհականաց, կամ թէ չէ այսպէս համարելի: Վճռելով այս հարցումն պարզ և հաւանելի ձևով մեք բողոքովին կվճռենք արևելեան և արևմտեան եկեղեցւոյ մէջ ամէն վիճամունքը: Այժմ գանք այս յատկացեալ առարկայի վրա խօսելոյ:—Արևելեան եկեղեցին չէ համարում Հռովմայ պապին այն՝ ինչ որ նրան ճանաչում է արևմտեանը: Ի՞նչ է պատճառը: Այն, որ «Հռովմայ եկեղեցւոյ վարդապետութեանը պարզ գլխաւորութեան կամ ժապետութեան մասին ուղղակի և պարզեմ ընդդէմ է Յիսուսի Քրիստոսի խօսելին և ողջ «ուրիշ երոյն»: Ահա սրան կաշխատեմ ևս ապացուցութեամբ բացատրել ձեզ այս իմ դրուածոյս մէջ: Միայն կարդացէք նրան հանդիստ և անշիտթ հոգւով առանց նախապաշարման, անաչառ դատողութեամբ, և չխլացնէք ձեր ականջներն լսելոյ այս իմ ձայնը, որ զուցէ օտար նոր և անհաճելի լինի ձեզ համար, բայց աւելի մտերմութեան և լաւակամութեան ձգտումից է յառաջանում:

Յայտնի է նպատակը այն նկատողական հաւաքաբանութեանց, որոց զօրութեամբն ձեր հեղինակները կարծում են ապացուցութիւն տալ իրանց վարդապետութեանը պապի միապետական զըլխաւորութեան մասին. յայտնի է այլ և այն զլիաւոր զործն, որոյ միջնորդութեամբն Հռովմայ եպիսկոպոսունքն մեծ հմտու-

Թեամբ շարժել և գրաւել են շատ աղղաց խելքն ու միտքն քանի մի հարիւր տարիների միջոցին: Ահա ձեր սիրելի հաւաքաբանութիւնն:

ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆ Ա. Սուրբ գրոց վկայութեամբն ինքն Յիսուս Քրիստոս կարգեց Պետրոս առաքեալին իրան փոխանորդ և յաջորդ, իշխան առաքելոց, հիմն և գլուխ ընդհանուր եկեղեցւոյն:

ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆ Բ. Պատմեալ աւանդութեան վկայութեամբն սուրբ Պետրոս առաքեալն երկար ապրեց և վերջն վախճանուեց Հռովմայ մէջ, այս տեղ էր նա առաջի եպիսկոպոսըն և կարգեց իրան յաջորդ սուրբ Ղինոսին: Եւրոպայի ուրեմն սրբոյն Պետրոսի յաջորդ Հռովմայ եպիսկոպոսունքն պիտի համարուին տեղակալ Յիսուսի Քրիստոսի և իշխողք բոլոր քրիստոնէական եկեղեցւոյն: Իմ կարծեօք՝ ես ուղիղ և արդար պարզեցի ձեր հաւաքաբանութեանց միտքը: Միւս այլ ես ինչ պէտք է ասել նրանց մասին: Խօսելով այսպիսի լեզուաւ հանդուցեալ Սիւրաամիկոսաց (ղարոցական աստուածաբանից) հետ, ես յառաջ քան ամէնը, հերքում եմ առաջի մեծ նախադասութիւնը հաւաքաբանութեան (СНЛОГНЗМЪ), որ և կաշխատեմ ապացուցութեամբ հաստատել և ապա երկրորդ նախադասութեան և յետ այնու եզրակացութեան վերայ խօսելոյ:

Յիսուս Քրիստոս մեր Փրկիչը, շինելով երկրի վրայ իւր սուրբ եկեղեցին, ամէն բանից առաջ ընտրեց նրա համար, որպէս թէ հիմն ձգելով նորա հաստատութեանը՝ տասներկու առաքեալներին. այս խորհրդոյս աներկբայ հաւատում են և վկայում ամէն դաւանութեան քրիստոնեայք: Պարզեց Փրկիչն իր առաքելոց որպիսի և իցէ իրաւունք և առանձնաշնորհութիւն իւր եկեղեցւոյ մէջ: «Շատ գլխաւոր և մեծերը» կասէք դուք, իսկ ես կաւելացրնեմ, «նորայ աստուածային բերանից դուրս բղխածները բացայայտ և հանդիսիւ»: Աչ ոք չէ կարող երկմտել այս մասին, երբ կարգայ սուրբ գրոց հետագայ խօսքերը: «Ով որ ձեզ կըլսէ՝ ինձ կըլսէ, և ով որ ձեզ կանարգէ՝ ինձ կանարգէ. և ով որ ինձ կանարգէ, ինձ ուղարկողին կանարգէ: (Ղուկ. 2. 16.): Այն՝ որ երկ-

րիս վրայ կրկապէք, երկնքուսը ևս կապուած կըլինի, և այն՝ որ «երկրիս վրայ կարծակէք, երկնքումն ևս արծակուած կըլինի» . «(Մատթ. ԺԸ. 18) : Ինչպէս որ իմ Հայրս ինձ ուղարկեց, ես ևս «ձեզ եմ ուղարկում առէք Սուրբ Հոգին. թէ որ մինի «մեղքն թողնէք, մեղքերը թողնուած կլինի նրան. թէ որ մինին «բռնէք՝ բռնուած կըլինի» . (Յովհ. Ի. 21—22) : Չնացէք այսու- «հետև ամէն հեթանոսները աշակերտ շինեցէք, նրանց մկրտեցէք «Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ անունովն. նրանց սուրբացը- «րէք, որ ամէն ինչ ձեզ պատուիրեցի, պահէն» . (Մատթ. ԻԸ. 19— 20.) : Երբոր Հոգին ձեզ վերայ կըհասնի, դուք զօրութիւն կառ- «նէք և ինձ վկայ կըլինէք Երուսաղեմումն և ամէն Հրէաստանի «և Սամարիայի մէջն, մինչև երկրի ծայրերն» . (Գործ Ս. 8.)» . Ուրեմն՝ պարզ երեւումէ, որ մեր Տէր Փրկիչը յանձնեց առա- «քելոց քարոզել, մկրտել, թողուլ մեղքերը, խրատ տալ և առաջ- նորդ լինել հաւատացելոց քրիստոնէական կեանքումն : Ոչ մի խօս- «քով և ոչ այլ ինչ նշանական ձևով Յիսուս Քրիստոս ցոյց չէ տուել առաքելոց, թէ ով և իցէ մինը նրանցից պէտք է լինի յետ նորա համբարձմանն գլուխ և առաջնորդող իշխան միւսերին : Ամենեցուն տուաւ միևնոյն իրաւունք և միևնոյն պարտաւորու- «թիւններ, ամենեցուն խոստացաւ նոյնպէս միևնոյն վարձ : — Սուրբն Պետրոս մի անգամ հարցրուց Տէրից . «Ահա՛ թէ — թէ բան խոզին՝ և «սուրբ երկրէն՝ սուրբ երկրէն լինէ թէ» : Յիսուս պատասխան տալով նրա այս հարցմանը, չխոստացաւ Պետրոսին ոչինչ առանձնաշը- նորհութիւն աւելի քան միւս առաքելոց, այլ ասաց նրանց ողջին . «Ճշմարիտն ասում եմ ձեզ, թէ որս է որ ի՛մ երեսն էլի՛ս դասներէս — անորէ «վրայ կանգնէ և իսրայելի դասներէս յեզնէ կըբարեկ» : (Մատթ. ԺԹ. 27—28) : Եթէ իրաւի Փրկչին հաճոյ էր նշանակել Ս. Պետրոսին իւրեան յաջորդ և տեղակալ, ապա ուրեմն այս մասին աւետարանի մէջ ասուած կըլինէր մի բան՝ նմանապէս պարզ և հասկանալի ինչ- պէս ասուածէ առհասարակ առաքելոց նշանակութեան և իրա- «ւանց համար՝ Տէրն կասէր նրանց սորա մասին մի բան, մանա- «ւանդ իւր համբարձման ժամանակին, բայց նա այս հանդիսաւոր րոպէին ասաց նրանց . «ահա՛ ես ձեզ հետ եմ — թէ որ ձեզն ժամանակէ խորհարա-

Ինքն խոստացաւ աներևութաբար լինել նրանց հետ, այլ չնշանակեց ոչ մէկը նրանցից իւրեան յաջորդ կամ տեղակալ:

Այս իմ այժմ ասածներիցս կարելի է հաւանել ու ընդունել դո-
նէ այն, որ աւետարանի մէջ չկայ ուղղակի և պարզ ցուցումն կամ
վկայութիւն, որպէս թէ, ինչպէս դուք էք ասում, Յիսուս Քրիս-
տոս տուելէ առանձին իրաւունք և ծայրագոյն իշխանութիւն
Պետրոս առաքելոյն թէ և այս ըստ բաւականին կողորդէ հաս-
տասութիւնը ձեր վարդապետութեան, որում սեպհականում էք
այնքան յարգ ու վսեմութիւն, մինչև պատրաստ էք տեղի տալ ա-
մէն մի բանի, միայն թէ կարողանաք կապել նրան մեզ վրայ,
բայց դուք ինչ կասէք, եթէ ես ցոյց տամ ձեզ աւետարանումը
ուղղակի և աներկբայելի ապացուցութիւններ, որ Յիսուս Քրիս-
տոս ոչ թէ միայն չէ տուել Պետրոսին առանձին իշխանութիւն
միւս առաքելոց վրայ, այլ և արդելել է միանգամայն մտածելը այն
մասին՝ թէ նրան և թէ նրանցից որը և իցէ միւսներին: Առա-
քելոց փոքրիկ ընկերութեան մէջ քանիցս անգամ հարցումն ծա-
ղեց, թէ այս տասն երկու աշակերտներից ո՞րն է մեծ, երևելի և
մօտիկ Յիսուս Քրիստոսին. շատ անգամ նրանք խնդրեցին սորա
վճիռն նոյն իսկ Աստուածային վարդապետից: Գարձրէք սորա
վրայ ամէն ձեր ուշադրութիւնը և դատեցէք անաչառութեամբ
առանց նախապաշարման: Եթէ Հռովմայ եկեղեցւոյ վարդապե-
տութիւնը համաձայն լինէր մեր Քրիչի վարդապետութեան հետ,
ապա միթէ չէր ասել նա առաքելոց, վճռելով նրանց հարցումն,
պարզ և ուղղակի, թէ Ս. Պետրոսն է նրանց ամենից մեծն, նա
պիտի լինի զլուխ և իշխող նրանց վրայ և այլն: Կարելի էր մի-
թէ, որ նա ծածկէր աշակերտներից այնպիսի մեծ ու զօրաւոր
ճշմարտութիւնը, եթէ իրաւի այն ճշմարտ էր: Միտ բերէք մա-
նաւանդ, որ Յիսուսի Քրիստոսի առաքելոց ասած խօսքերը
պիտի անփոփոխելի կարգ ու կանոն լինին բոլոր քրիստոնէից
համար մինչև աշխարհի և ժամանակի վերջն: Ինչպէս զորօրինակ
առաքեալքն խնդրեցին Տէրից, որ նա սովորացնէ նրանց աղօ-
թելը և Տէրը սովորացրուց, ոչ նրանց միայն, այլ մեզ ամենեցուն,
ամէն եղած և ապագայ քրիստոնէից աղօթելոյ դերագոյն օրինակը

այն է Տէրունական աղօթքը: Արկնում եմ՝ առաքեալքն շատ անգամ հարցրեցին Տէրից, ով է նրանցից մեծը. Տէրի տուած պատասխանըն պէտք է անշուշտ վճռէ թէ նրանց և թէ մեր ամէն երկամուծիւնները: Բանանք սուրբ աւետարանը . աշակերտներն Յիսուսի մօտ եկան և ստացին, մեղանից ով մեծ կըլլնի երկնքի արքայութեան մէջն: Եւ Յիսուս մին երեխայ կանչեց իւր մօտ և նրան կանգնացրուց նրանց միջումն և ասաց՝ «Ճշմարտն ասում եմ ձեզ, թե որ շարունակ և շինի էրեւաների նման, շէտ մընիլ երկնքի արքայութեան: «Որեմն ով որ երան անշը այս երեւանի նման էրեւանացիէ, նա է մեծ երկնքի արքայութեան մէջն»: (Մատթ. ԺԸ. 1—4.): Այս Աստուածային խօսքերը կարողալուց յետոյ ձեր միտքը բերէք Հռովմայ քահանայապետին, լաղմած փառաւորապէս բարձր աթոռոյ վրայ, որ բարձրացրած տանում են իւրեանց ուսոց վրայ նորա ազնիւ ու վեհանձն միաբանակիցքն պատած չորս կողմը վարձկան Շուկարիու անձնապահ զօրականաց գնդովն, շողշողուն երկաթի սաղաւարտներով և սուրերով, և ապա թոյլ տուէք ձեր խղճմտանքին ազատօրէն խոստովանել, թէ նա այս իւր վիճակովն նման է արդեօք այն երեխային, որ Տէրի ասածին պէս մեծ է երկնքի արքայութեան մէջն Էհ, երես շուռ տանք այս փայլուն ու փառաւոր, բայց կարեկցութեան արժանի պատկերից, և դառնանք դէպ ի Աստուծոյ բանին աշտանակը: Տէրն մօտանում էր Երուսաղէմին, ուր պիտի կրէր չարչարանք և մահ: Այս ճանապարհումն . «Ձեռքերեացի սրբաց մայրն էրեան սրբաց հետ մեր էիւս, երկրպագութեան եր պալես և «նրանից մի բան եր խնդրում»: Իսկ նա ասաց նրան «Ի՞նչ ես խնդրում» կլինը ասաց. «ասա՛ որ այս է՛ երկու սրբիտ մինն քա լու կողմը և մինն յախ էս մը նստին քա «արքայութեան մէջն», Յիսուս պատասխան տուեց և ասաց . «Շէտ ինքում թե «Ի՞նչ ես խնդրում Բայց ի՞նչ և յախ էս կողմն նստացնելն ինչ շէ՛ որ քամ, ալ «մայն նստանցն (է), սրոց ի՞նչ Հօրեցոյ քամալն է» Դուք կարելի է կարծում էք, թէ Յիսուս Քրիստոսի աջակողմեան տեղը պատրաստուած էր արդէն յատկապէս սրբոյն Պետրոսի համար Պատասխանուոյ փոխանակ շարունակենք մեր ընթերցումն աւետարանից: «Ե՛ այն քա ու աշակերտին, սրոց խոսումն եր և Պետրոսն, երբ որ լեացին, Բարեպտան այն երկու եղբարց վրայ: Յետոս ն.անց խանկեց իւր մը և ասաց, «Բիքում է՛, որ ազգաց էրեւաններն նրանց վրայ քերտղերութեան էն անում, և մեծաճեղներն նրանց վրայ էրեւանութեան էն անում: Այնպէս լուրի վնի մեր մէջումն» .

«Բայց յեզանից ու՛ր կաննայ մե՛ծ լինել, և ո՛ւր յեզ պաշտօնեայ լինի : Եւ յեզանից ու՛ր
«կաննայ արաջին լինել, և ո՛ւր յեզ շարայ լինի» Մատթ. Ի. 20—27.) : Եթէ
յայտնի խօսակցութեան յետոյ Փիլիպպեայ կեսարեայի կողմերումն
(Մատթ. ԺԶ. 13—19) Յիսուս Քրիստոս յիրաւի տայր կամ խոս-
տանայր սրբոյն Պետրոսի ջոկ առանձնաշնորհութիւններ աւելի
քան թէ միւս առաքելոցն , ապա այս ի հարկէ յայտնի կըլինէր
նրանց, և այն ժամանակ չէր կարող և ծագուիլ նրանց մէջ հար-
ցումն՝ ով է նրանցից մեծն, կամ այլ կերպ ասել. Չերեղիայի որդ-
ւոց մօր խնդրոյ պատասխանուոյ դէմ Տէրն կասէր, թէ այն տե-
ղը, որ նա է խնդրում՝ տուված է արդէն Պետրոսին : Գիտել պէտք
է նմանապէս, որ այս տեղ սուրբ Մատթէոսի աւետարանից յի-
շած անցքը հատատում է կամ կրկնում սուրբ Մարկոսն, որ ա-
շակերտ և ճանապարհակից էր սրբոյն Պետրոսի (Մարկ . Թ. 35
Ժ. 38) : Եւ և նոյնը պատմումէ և սուրբ Ղուկաս աւետարանի-
չըն (Թ. 46—48) : Բայց վերջինն յաւելացնում է, թէ մեծութեան
(աւագութեան, երիցութեան) մասին հարցումն առաքելոց մէջ
ծագուեց այլ և Յիսուս Քրիստոսի նրանց հետ վերջին երեկոյեան
սեղանի վրայ նստած ժամանակին . «նրանց (աշակերտաց) Դէ և
«հախարակաւիւնն էլն՝ ի՛նչ էրանցից ո՛ւր պիտի մե՛ծ համարվի : Եւ նա առաց՝ ապաց Բա-
«թաւրներն պիտապետուս էն նրանց վրայ և նրանք՝ որ էլիանաւիւնն էն անաս՝ նը-
«րանց վրայ՝ Բարեբար էն ի՛նչ վնաս : Բայց դուք՝ որ յանդէս լիք, այլ ո՛ւր յեր Դէն մե՛ծ է,
«և ո՛ւր քոտրի պէս լինի և արաջնորդն՝ շարայի պէս» : (Ղուկ . ԻԲ. 24—27) :

Ահա հեղ ուղղակի և պարզ վկայութիւնք աւետարանից՝ սրբոյն
Պետրոսի յարաբերութեանց մասին դէպ ի միւս առաքելաները :
Յետ կարդալոյն այս խօսքերը, կարելի է ապա մտերմութեամբ և
բարեխղճութեամբ հաստատել, թէ նա Յիսուս Քրիստոսի կամ-
քովն եղել է զլիսաւոր իշխան և առաջնորդ առաքելոց : Նա տըր-
տնջում էր միւս աշակերտաց հետ ի միասին (ակովբայ և Յով-
հաննու վրայ նրա համար, որ սոքա ոչ ինքեանք, այլ միայն
խրեանց մօր միջնորդութեամբն խնդրեցին առաջի տեղերը Յի-
սուսի Քրիստոսի մօտ : Ուրեմն՝ չէք վշտացնում դուք մեծ առա-
քելայի հողին, չէք շարժում նրա տրտունջն ու տհաճութիւնը ձեր
վերայ, երբ պահանջում էք մեզանից համարել նրան այն՝ ինչ որ
նա ինքն երբէք չէ մտածել իրան սեպհականիւոյ

Ակամայ և ողբով չափ ցաւելով ձեզ վրայ՝ դառնամ դէպի միւս կողմն հարցման, դէպի այն ապացուցութիւնները, որովք դուք աշխատում էք հաստատել ձեր սիրական վարդապետութիւնը: Ակամայ եմ ասում, ոչ նորա համար՝ որ ևս համարում եմ ձեր ապացուցութիւնները աւելի դօրեղ, այլ այն պատճառաւ, որ նրանց մասին և նրանց հակառակ շատոնք վաղուց և շատ անդամ խօսել են ու գրել: Յաւում եմ հոգւով նորա համար, որ Աստուծոյ բանը, մեզ կեանք բաշխող բանը, մեր ոտից ճրագ ու լոյսը՝ ավստնս, մարդիկ շինում են գործի իւրեանց անձնական դատողութեանց կամ շահասիրական նպատակներին:— Դուք հաստատում էք պնդելով, թէ պապի գլխաւոր լինելոյ մասին վարդապետութիւնը հիմնուում է սուրբ գրոց վրայ և հաստատում էք սրան այնպէս համարձակ և վճռահատաբար, որ ամէն միւս ապացուցութիւնները, որոնք դուրս բերած են հայրապետաց պրուածքից կամ ընդհանրական ժողովոց վճռական սահմանադրութիւններից և այլն, համարում էք թոյլ կամ անուղիղ, ըստ որում այս վկայաբանութիւնքն չեն հաստատում, թէ յատկապէս իսկ Յիսուս Քրիստոսից է ստացիլ իւր իշխանութիւնը ձեր պապն, ինչպէս տեղակալ Պետրոսին: Այս օրինակ ձեր դատողութիւնը ու հաստատելն շինում են մեր միջի վէճը աւելի հեշտ, հաւաքուած կենդրոնի մէջ և նրան եղբակացութիւնը աւելի վճռահատական:

Չեզ ի հարկէ յայտնի է եկեղեցական պատմութիւնից, թէ համարեալ չէ եղած մի այնպիսի հերձուած, որոյ հետևողքն իրանք իրանց պաշտպանելոյ և արդարացնելոյ համար յառաջ չբերէին որպիսի և իցէ ասացուած սուրբ գրքից: Սորա պատճառն էր, յայտնի է ոչ Աստուծոյ բանն, այլ այն, որ անխոհեմ կամ չարամիտ մարդիկ գործ էին դնում նրան իւրեանց օգտին ոչ այնպէս, ինչպէս արժան էր. վեր էին առնում որ և իցէ մի տեղ, բաժանելով նրան նախընթաց և յետագայ կամ թէ ուրիշ աւելի ճիշտ և որոշիալ տեղերի կապակցութիւնից և կամ փոխաբերական ասացուածը մեկնում էին բառ առ բառ, միտն չստիպանց աւելորդութեամբ միտք էին ընծայում, իսկ միւսի մասին բոլորովին լռում էին և այս կերպիւ իւրեանց ինքնակամ և ստապա-

ճոյճ դատմունքն անխիղճ և սուանց պատկառանաց ցոյց էին տալիս իբրև հաստատուն ու անհերքելի ճշմարտութիւն և որպէս թէ հանած սուրբ գրքից: Մեք տեսինք, ինչպէս պարզ, ճիշտ որոշակաւ և բազմաթիւ են սուրբ գրոց այն տեղերն, որոց մէջ խօսուում է սրբազան առաքելոց հաւասար իրաւանց, պարտաւորութեանց և նրանց եղբայրական միաբանութեան մասին: Այսպէս են այն տեղերն, որոց վրայ դուք հաստատում էք պապականութեան շինութիւնը: Չլիսաւոր տեղերն, որ ըստ մեծի մասին դուք անդադար վկայութիւն էք բերում ձեր մտածութիւնը յառաջ տանելոյ համար՝ երկու են: Առաջինը և աւելի զլիսաւորը դո՞ւնում է Մատթէոսի աւետարանի մէջ (Գլ. ԺԶ. 16—19): Տէրն ասաց Պետրոս առաքեալին. «Պէ՛րսոս, որն էս լէ՛ժ (քար) և այդ վէ՛ր «Վերայ է՛ եկեղեցե՛ն կառնե՛մ և որ ինչո՛ք որսերն լին յառնել քարան»:

Այս ասացուածիս մէջ կան բառեր, որք ունին ուղիղ և պարզ միտք. միւսերն գործ են ածուած սյլաբանական նշանակութեամբ և շարժում են, կամ լաւն ասելով՝ շարժեցին երկբայութիւն ինչ այն ժամանակից հետէ, երբ Հռովմայեցւոց եպիսկոպոսունքն սկսեցին մեկնել նրանց ինչպէս իւրեանց կամքն ու օգուտը կը պահանջէին: Պարզ ու որոշակի ասած է՝ թէ Տէրն կը շինէ եկեղեցի, որոց չեն յաղթիլ դռներն, այսինքն զօրութիւնքն դժոխոց կամ սատանայի. բայց թէ՛ ում, կամ ինչի վրայ Քրիստոսի եկեղեցին պիտի հիմնուի՝ սորա մասին կայ երկմտութիւն և տարաձայնութիւն: Յայտնի է, որ շատոնք հին հայրապետներից և զլիսաւոր հեղինակներից եկեղեցւոյ, որոց թուումն են Հերոնիմոս, Թէոդորիտոս, Հիլարիոս, Աղրիանոս և արեմտեան երանելի Աւգոստինոսն), թողիկ են մեզ համար իւրեանց դրաւոր վարդապետութիւնը, թէ Տէրն իւր եկեղեցին խոստացաւ հիմնելոյ հաւատոյ դաւանութեան վրայ, որ ասուեցաւ Պետրոսի բերանովն, կամ նորա իսկ վրայ, զոր նա խոստովանեց Որդի Աստուծոյ, այսինքն Յիսուսի Քրիստոսին (*): Երկուր քաշուած քով վկայութիւններ հա-

(*) Քրիստոսի փոխարեւրական խօսքերի մէջ քաջ կամ հիշե՛ք բառը ունի այլև չոկ զօրութեամբ հասկանալի միտք, ըստ որում նրանում իմացուում է զօրութիւն հիմնարկելոյ, կարգով դասաւորելոյ, հաստատուն պահելոյ շինութիւնը, իւրեան

նկն սորա հաստատութեան համար հարանց գրուած քննից ա-
 ւելորդ եւ համարում, ըստ որում ցանկացողքն կարող են դանել
 նորանց ուրիշ աւելի ընդարձակ շարադրութեանց մէջ. ուստի պիտի
 խօսիմ հասարակ ձևով կարճ և պարզ, առանց տրամաբանական
 ճարտարութեան և արուեստական խորալննութեան, բայց ձև-
 լով յատակ և նախապաշարմունքից անխառն հայեցողութիւն դէպի
 Աստուծոյ բանին խորութիւնը:—Գուք ասում էք, թէ Քրիստոս
 Քրիստոս խոստացաւ շինելոյ իւր եկեղեցին յատուկ իսկ Պետրոսի
 վրայ, այլ ոչ Պետրոսի դաւանած Քրիստոսի Աստուծոյ որդւոյն
 հաւատոյ վրայ: Այս այսպէս է: Բայց դիտելի է ամէնից յառաջ,
 որ եթէ սա այսպէս լինէր, ապա Տէրն կասէր. «դու միայն ևս Պետ-
 րոսն (քար) և միայն քո՝ որպէս քարի վրայ կշինեմ իմ եկեղե-
 ցին» կամ թէ «բայ ի քէն ուրիշ ոք չպիտի լինի քար»:

Ընդունենք առ ժամանակ ձեր այս մեկնութիւնը իւր բոլոր
 գորութեամբ ու պարունակութեամբն և ասենք, թէ «Քրիստոսի
 եկեղեցին շինուած է Պետրոսի վրայ»: Սորանից ինչ դուրս կգայ:
 Յայտնի է այն, որ դուք համարձակ և բռնութեամբ հեռացնում
 էք ոչ միայն տասնուամէկ սիւները եկեղեցւոյն, այլ և նոյն իսկ այն
 անկիւնակալ քարը, որ թէև արհամարհուեցաւ շինողներից, բայց
 նորանով աւելի ելե՛ւ իւր անկեան (Գործ. Գ. 11): Միտք արէ՛ք ու-
 րեմն՝ կարելի է միթէ շինել եկեղեցւոյն մշանջենական շինութիւնը
 վրայ բառնալոյ ու պահելոյ նրա ծանրութիւնը և այլն. բայց այս նշանակութեամ-
 բ ըստ ո՛չ Պիտրոսն և ո՛չ միւս առաքեալքն չեն կարող կոչել քոք կամ հի՛մ, որով-
 հետև այդպիսի գորութիւն յատուկ է միայն Աստուծոյ և Քրիստոսին, ինչպէս որ
 և Աւգոստ. (մեկն. Յովհ. ճառ ձԻԳ) չերոնիմ (մեկն. Մատթ. Է) Թէողորխոս
 մեկն. Ա. Կորնթ. Գ.) քոք բառովն իմացան նոյն ինքն Քրիստոսին, Այս փոխա-
 բերական միտքը նախ առաջին՝ վերաբեցուումէ դէպի Աստուածային ուսուցիչը,
 որոյ մասին կայ վկայութիւն և սուրբ գրոց մէջ շատ տեղերում, ինչպէս՝ (Գործ.
 Գ. 11. Հռովմ. Թ. 33. Ա. Պետր. Բ. 6. Ա. Կորնթ. Գ. 11 և Ժ. 4) երկրորդ՝
 այդ իսկ անունը ասվում է բոլոր տասն երկու առաքելոցն առանց ինչ ջոկութեան
 և առանց նախապատուութեան Պետրոսին, (տե՛ս Եփես. Բ. 20. Յայտ. ԻՍ. 14).
 երրորդ՝ նոյն իսկ անունը ինքն իսկ Պետրոս առաքեալը ընծայումէ ամէն Քրիստոնէից,
 ասելով, որ նրան մօտացել էք (ինչպէս) կենդանի գարին (Քրիստոսին) . . . Եւ
 դուք կենդանի քարերի պէս շինում էք հոգևոր տաճար (Ա. Պետր. Բ. 4):

այնպիսի թոյլ ու հեշտ քանդուող հիման վրայ, ինչպէս մարդն է, որ ենթարկուած է թերութեան, անկատարութեան և մահուան: Պատահում է, որ ձեր եկեղեցին, ամէն մի պապի մահուան յետոյ լինում է անդլուխ, ուրեմն և մեռեալ մարմին: Թողում խօսել այն ժամանակի վրայ, երբ այն ունէր երկու, այլ և երեք գլուխք: . . .

Այս իմ այժմուս ցոյց տուած անյարմարութիւնից խորշիկոյ պատճառաւ դուք ասում էք՝ «Յիսուս Քրիստոսն է հիմնող եկեղեցւոյն և միևնոյն ժամանակին ինքն իսկ և նրա հիմն: Ասելով յիշեալ խօսքերը իւր առաքելոյն, Տէրն չէ հրաժարուում իւր իշխանութիւնից և չէ մտադիր շինելոյ իւր եկեղեցին ուրիշ որեիցէ հիման վրայ, եթէ ոչ ինքն իւրեան վրայ. նա տալիս է Պետրոսին միայն մասնակցութիւն Տէրին պատկանեալ արժանաւորութիւնից եկեղեցւոյ հիմն լինելոյ. առաքեալն է վէմ (քար), որոյ վրայ պիտի կայանայ բոլոր շինութիւնը, բայց և այն ինքն հանգչում է Յիսուսի Քրիստոսի վրայ»: Այսպէս ասելով, ուրեմն դուք հիմն շինում էք հիման վրայ. բայց սա քիչ է. ինչպէս կտեղաւորէք դուք, ասացէք միւս մնացեալ առաքեալներին, որք նմանապէս հիմն են կոչուում, ամէնքն միասին շարադասութեամբ մէնակ Պետրոսի վրայ, կամ թէ արժանաւորութեան և աստիճանի կարգով մինը միւսոյն վրայ: . . . Նոյնպէս ինչ ձևով կսահմանէք միւս առաքելոց յարաբերութիւնն ու դրութիւնը դէպի Պետրոսի յաջորդները: Միթէ սուրբ Յովհաննէս Աստուածաբանը Պետրոսի մահուանից յետոյ ստորադրեալ էր Ղինոս (Λίνος) կամ Անակղետոսին, (Ανακλετος): Ո՛հ, Արարիչ Աստուած, մինչև ինչ աստիճանի կարող են հասցնել մարդոյն նրբամտութիւնը և խորամանկ հնարախոհութիւնը:— Այս առաջին և միակ օրինակը չէ, որ դուք կամելով անհիմն մտածութեամբ զօրացնել ձեր թոյլ կողմը, անարդում ու անպատուում էք ճշմարտութեան սրբութիւնը, որով լինում էք և Աստուածանարգ: Միայն յիշելն է պէտք ձեր նոր վարդապետութիւնը հաւատոյ: Է՛ր պիտի այսպիսի թերի իմաստակութեամբ դատողութիւն ունենաք, կամ պարզն ասեմ, խելքներիդ ուժ տաք. ինչո՞ւ է պէտք այդ կերպով միջնացնել և խառնափնթորել հարցումն, երբ այնպէս պարզ և անփոփոխապէս

ինքն Հողին Սուրբ սասայ բերանով սուրբ և ծայրադոյն Պաւղոս
 առաքելոյն : Առաւելաց և հարգարեից հիմանդին Վերայ շինսած, որոյ ան-
 կիւնի գլուխն Յիսուս Քրիստոս է : (Եփեսո. Բ. 10) : Ասած է այլ
 ևս. «տաւաթի պարխալն որան երկու հիմանդ սաներ և նրանց Վրայ Գարե որան երկու
 «առաւելաց որան երկու անսաներն» : (Յայտ. ԻՍ. 14) : Ահա ինչպէս և ում
 վրայ է հիմնուած քրիստոնէական եկեղեցին :

Մի կարծէք, թէ ես դիտմամբ լռում եմ ու չհամարձք բերում Յի-
 սուսի Քրիստոսի միւս հետեւալ սուրբ Պետրոսին ասած խօսքե-
 րը. «Եւ երկնի արտայտութեան բանալիքը թող կրամ և այն, որ երկրի վրայ կապեա,
 «երկնքս ևս կապած կենի, և այն, որ երկրի վրայ կարծակեա, երկնքս ևս արծա-
 ւած կենի» (Մատթ. ԺԶ. 19) : Ինչ ինչ պէտք լուի ու չճիշել այս
 խօսքերը, երբ նրանք կատարելապէս կրացայայտուին այլ և ձեռ
 համար, եթէ շուռ սաք նոյն իսկ աւետարանի երկու կամ երեք
 երեսն՝ կտեսնէք, որ Տէրն միևնոյնը, ինչ որ Պետրոսին՝ սասայ և
 ամէն միւս առաքելոց և այն հանդիսիւ հաւատացնելով : «Ճշմարտն
 «ասում եմ ձեզ թէ այն, որ երկրի վրայ կապեա, երկնքս ևս կապած կենի և
 «այն, որ երկրի վրայ կարծակեա, երկնքս ևս արծաւած կենի» (Մատթ. ԺԶ
 18) : Միւս ինչ ստացաւ մասնաւորապէս սուրբն Պետրոս Տէրից :
 Միայն այն, որ նա առաջ քան միւսները լսեց այս խօսքերը և
 առաջին ստացաւ այն՝ որ պատկանում էր ամէն առաքելոց. պատ-
 ճառ, առաջինն նա պարզ դաւանեց Մեսիային Որդի Աստուծոյ :
 Գուք գուցէ կասէք, թէ միւս առաքեալքն ստացան իշխանու-
 թիւն թողութիւն տալոյ մեղաց իսկապէս այնպէս՝ ինչպէս քահա-
 նայքն ստանում են այս իշխանութիւնը իւրեանց եպիսկոպոսից :
 Այն, հեռի չէ ձեզանից ասել և այս բանը, ըստ որում վաղ յայտ-
 նի է, որ դուք շատ սէր ունիք զանազան նենդաւոր նրբամտու-
 թիւններ մտածելոյ ձեր թոյլ կողմին զօրութիւն զտանելոյ համար-
 բայց ասէք, խնդրեմ, երբ պապը ձեռնադրում է եպիսկոպոս, ս-
 պա պապն ինքն է տալիս ամէն մի քահանային, որ այն եպիս-
 կոպոսի վիճակումն են լինում՝ իշխանութիւն թողութիւն տալոյ
 մեղաց, թէ յանձնում կամ թողում է եպիսկոպոսի կամացն հաղոր-
 դել այս իշխանութեան իրաւունքը բոլոր քահանայից : Յայտնի
 բան է, դուք կասէք վերջինը հաստատութեամբ : Եթէ Տէրն ստո-
 րադրած լինէր ամէն առաքեալները մէնակ Պետրոսին, ապա ի

հարկէ կյանձնէր նրան տալ մասն նրա ստացած իրաւունքից միւս առաքեալներին : Քիտեմ՝ դուք և այս բանը չէք հաստատել :

Եթէ դուք կարդաք իմ ամէն դրածս առանց նախապաշարման, անկեղծ սիրով դէպի ճշմարտութիւնը, այն ժամանակ զուցէ կգաք և յետագայ մատածութեան, թէ՛ «եթէ մեք իրաւի սխալուում ենք և սխալանօք ենք հասկանում Յիսուսի Քրիստոսի խօսքերը, ապա ուրեմն՝ ինչպէս Տէրն թոյլ տուեց ողջ և այնչափ մեծ բարձրութեան ժողովրդին այնպէս երկար ժամանակ և այնքան շայտնի ստարգութեամբ մնալ սխանաց և մոլորութեան մէջն» : Բայց միտք բերէք, որ մարդս որպէս մտաց և կամաց ազատութիւն ունող՝ կարող է դործ դնել նրան դէպի չարն, միտք բերէք երանելի Ազոտաստիւնոսի ասածը, թէ՛ «Ս. Գրքի մէջ արանց մէջ, ինչպէս և Կրօնք միտ բերէք, որ տասներկուսիցն միայն երկու ցեղք մնացին հաւատարիմ իւրեանց օրինաւոր թագաւորին և միայն մի ժողովրդի էր տուած օրէնքն Աստուծոյ, երբ անհամար աղգերը, հազար տարին ընդ միջոցին խրուած մնացել էին մոլորութեան մէջ : . . . Անխորձ են Աստուծոյ դատաստանները և անքննելի նորա ճանապարհները . . . բայց դուք կասէք, ապա ինչո՞ւ համար ամենազէտ Տէրն առաջը առնելով չխափանեց սուտ մեկնութիւնը նորա խօսքերին՝ որ և իցէ ուրիշ խօսքերով, որ աւելի ուղիղ, պարզ և որոշակի լինելին : Ա՛խ, արդար է աստուած և ծածկագէտ, նա յառաջագոյն գիտէր գայթակղութիւնը և զգուշացոյց նրանից : Բայց գիտէք, որ հողածին մարդս կուրացած լինելով ինքնախորտութեամբ և կանխակալ կարծիքներով (հին սովորութեամբ), ոչինչ չէ տեսնում, պատճառ, որ չէ կամենում տեսնելոյ : Կարդացէք մատդրութեամբ ողջ Ժ. Զ. գլուխը Մատթէոսի աւետարանին, որոյ մէջ գտնուում են այնքան շատ անգամ ձեր բերած վկայութեան համար խօսքերը, կարդացէք սրտանց, լաւ ուշադրութեամբ և առանց թերութեան թողելով ողջ բանի միտքը :— Դուք ասում էք՝ թէ Տէրն նշանակեց սուրբ Աւարոսին ինքնին, երեսուս երես նրան և նրան միմիայն, այլ ո՛չ թէ ամէն առաքեալներին հիմն, զուխ և իշխան բոլոր եկեղեցւոյն : Շատ բարի, բայց

լսեցէք, ինչէ ասում Տէրն: «Երբեք՝ չեղ Յնանի որդի Սեօն, ինչպս որ Եսայիս
«և արեւել չեղ չե յայտնեց, Բայց ե՛հ Հայրն, որ ելինսն ինքն» (Մատթ. ԺԶ. 17):
Եւ այսպէս սուրբն Պետրոս երանելի է միայն այն պատճառաւ,
որ ասաց ոչ իւր կարծիքը, այլ արտասանեց ճշմարտութիւնը, որ
թելադրել էր (միտքն էր ձգել) նրան երկնային Հայրն. ուրեմն
հա ինքն ըստ ինքեան, որպէս մարդ՝ չունի առանձին հաստատ-
պատուութիւն ուրիշների վրայ. սաւանալով յայտնութիւն Աստու-
ծոյ կողմից, հա չստացաւ այլ ինչ իշխանութիւն: Սուրբ մարգա-
րէքն. Նսայի, Երեմիա և միւսերն ստացան շատ ու զանազան
յայտնութիւններ Աստուածանից, չունելով ոչ ինչ առանձին արտո-
նութիւն հին կտակարանի քահանայապետութեան կարգի մէջ:
Սա չէ միայն. կարդացէք հետեւալ տողերը աւետարանի նոյն խոյ
զլխումը և կտեանէք, ինչպէս փոքրիկ և թոյլ է մարդն ինքն ըստ
ինքեան, ինչպէս հեշտ ընկնում է սխարանաց ու մորորութեան մէջ,
երբ իւրն է խօսում և ոչ Աստուծոյն: Յեր Գնո՛ ինչանեց, սարանա՛ն, ինչ
«Գայեափղսեմն էս, ինչպս որ դոս Աստուծոյ բաներն փոր չեա արեւաս, Բայց մարդ-
«կանց բաներն» (Մատթ. ԺԶ. 23): Ո՛ւմ է այսպէս սաստիկ ձևով ա-
սում Տէրն. ի հարկէ՛ Պետրոսին, որում նոյն խոյ ժամանակին
.քիչ մի յառաջ ասել էր. դու ես Պետրոս և այլն: Միթէ կարելի՞
էր ասել այսպիսի խօսքեր իւր նոր նոյն խոյ ժամանակին նշա-
հակած տեղակալին և յաջորդին Առանց խնայուան նը-
պատակի չեն գրուած այս խօսքերը միևնոյն զլխումն, որոյ մի-
ջից դուք հանում էք ձեր մեծ ու զօրեղ ապացոյցութիւնը. բայց
չէք նշմարել և մինչև այսօր ևս չէք նշմարում այն զգուշացու-
ցումն, որ պատրաստել է ձեզ համար մեր Աստուածային Ուսու-
ցիչն: Մի՛ վիրաւորուիք, եթէ ես (հետեւելով ձեր օրինակին ինչպէս
դուք միշտ սուլորութիւն ունիք դատել խելքի ուժով և մտաւո-
րարար համեմատութիւն տալ), յառաջ բերեմ այլ և այն, որ Հը-
ուովմայ եկեղեցին իւրեան զլուխ՝ քահանայապետ ձեռնադրելոյ
ժամանակին (խմացէք, որ մարմինն օրհնում է իւր զլուիւր) հան-
դիալ բացականչում է պապին՝ Պետրոս առաքեալին ասուած
խօսքերը, այսինքն «Դոս էս Պետրոս» (վէմ) և այլն: — Եթէ իրաւի կա-
րելի է վերաբերել կամ յարմարացնել այս խօսքերը դէպի պա-

այլն՝ ինչպէս Պետրոսի յաջորդ, նոյնպէս միւս ամէնը, ինչ որ առաջ է առաքեալին կամ նրան մասին, ապա ուրեմն՝ նոյն իսկ ճշմարտութեան հետեւելով, ով և իցէ, որ չէ ընդունում պապի իշխանութիւնը, անդադար տեսնելով պարզապէս նրա կատարեալ երկրային ընթացք ու ձգումն և մարդկային ջանք ու աշխատութիւնքն՝ կարող է, ասէք, դիմել դէպի նա աւետարանական խօսքերուլու. «Դո՛ւ Աստուծոյ Բաներն Դո՛ւ չես առնում, Բայց Բարդեմոյ Բաներն»։ (Մատթ. Ժ. 23)։ Արկնում եմ, մի վիրաւորութիւք այս մօտաւոր համեմատութեամբ, որոյ տեղի եմ տալիս, հետեւելով ձեր օրինակին և որը՝ ինչպէս կտեսնենք յետագայ բաներից՝ իւր ուղղութեամբըն ոչինչ պակաս չէ այն մօտաւոր նամանութիւնից, որ դուք սովոր էք դարձ դնելոյ ձեր օգտին համար։ Իմ կարծեօք չէ կարելի, և դուք չպիտի համարէք վիրաւորիչ այն խօսքերը, որ ինքն Տէրն ասաց իւր «Եւանգելիոն» առաքեալին։ Հռովմայեցւոց քահանայապետքն պարծենում են սուրբ Պետրոսի ամօռումն, բայց թուում է ինձ, որ ոչ ոք նրանցից չէ համարել իրան լաւ և բարձր նրանից ուրեմն և ի՛նչ ջոկ իրաւամբք պիտի դէպի վիրաւորութիւն վերաբերուին այն Տէրունական խօսքերն։

Բացի սորանից հեշտ և շուտով կարելի է վճռել երկբայութիւնը ի մասին Աւետարանի միւս տեղւոյն, որ դուք նամանապէս համարում էք զօրեղ ապացուցութիւն ձեզ համար։ Տէրն յետ իւր յարութեանն երևեցաւ աշակերտներին Տիբերեայ ծովի ավի մօտ և երևք անգամ հարցրուց սուրբ Պետրոսից. «Եր՞ն՞դ ես»։ Երբ առաջի անգամն պատասխանեց Պետրոսն. «Դո՛ւ Գեորգի», որ «Եր՞ն՞դ ես» Գեորգի, Յիսուս Քրիստոսն ասաց նրան. «արածացրո՛ւ իմ դառներս», իսկ երկրորդ և երրորդ անգամովն. «Եր՞ն՞դ ես»։ Ի՛նչ է դուրս դալիս սրանից։—Առյ՛ր հաւատարմութեամբ, ո՛չ դէպի առաքեալն, այլ դէպ ի պապն՝ Հռովմայեցւոց հեղինակներն հաստատում են, որպէս թէ առաջին անգամն Տէրն յանձնում է Պետրոսին արածացնելոյ այլև հովիւներին (*): Այժմ ինքներդ՝ գոնէ մի վար-

(*) Տղայական կարծիք է Հռովմական վարդապետաց միւս ազատական այն մեկնութիւնը, որով Գեորգի և աշտար խօսքերի մէջ միտք խառնելով, աշխատում

կեանս, մոռացէ՛ք կողմնասիրութեան ախտը և ասացէ՛ք անկեղծաբար
կարելի է միթէ այսպէս մեկնել Աստուծոյ բանը: Կարելի է հաւա-
տոյ դործոյ մէջ բանացնել այսօրինակ խմաստասիրական դատո-
ղութիւն: . . . Շատ ցաւելի է լինում մեզ համար, երբ մտա-
ծում ենք այս ձեր դրութեան մասին: Դուք գուցէ շատ պարզա-
պէս զգում էք ձեր թուլութիւնը, որ թիկն էք տալիս մինչև այս-
պիսի թոյլ հիման վրայ և կամ ո՛չ թէ հիման, այլ օղի և դատարկ
երևութից վրայ: Զարմանք են ևս, որ դուք որպէս թէ մոռա-
ցել էք և միւս այն հանդամանքն, որ շատ երկար ժամանակ չէր
անց կացել մինչ Տէրին այդ խօսքերը ասելն: Երբ Պետրոսն երեք
անգամ ուրացաւ նրան, ապա ուրեմն կորցրուց և առաքելութիւնը
և իրաւունքը արածացնելու եկեղեցին միասին կամ հաւասար միւս
առաքելոց հետ: Դուք միթէ չէք տեսնում, որ ողորմասիրտ Տէրն
երեք անգամ «բռնե՛ր» ասելովն՝ միայն կրկին կանոնեցրուց, կամ
պարզն ասել, նորոգեց Պետրոսին առաքելական աստիճանումն՝
ո՛չ աւելի և ո՛չ պակաս: Դուք միթէ միտք չէք բերում՝ որ սուրբն
Պետրոս տրամեց երրորդ հարցմունքից. «Երբ ե՞ս եմ»: Լաւ յայտ-
նի է, որ Տէրին երեք անգամ հարցմունք առնելուցն նա զղաց
ժածկեալ՝ թէ և չափազանց նուրբ յանդիմանութիւն իւր ուրաց-
ման համար: Եւ մտիկ տուէ՛ք ինչպէս զօրաւոր ներդործութիւն
առնեցաւ նրա վրայ փոքր ինչ յառաջ ստացած խրատն . Տէրի
հարցնելուց՝ «Երբ ե՞ս եմ որո՞նցեց (աշակերտներից) «եւ»»: Պետրո-
սըն այլ ևս չէ պատասխանում համարձակ առաջուայ յանձնապաս-
տանութեամբ ինչպէս երբեմն էր ասել՝ «Ի՛նչ և մե՞նք ևս գայեալ է՞ն
և այլն, այլ խոնարհաբար պատասխանեց. Տէր, «Երբ ե՞ս եմ գե-

են հաւատացնել որպէս թէ Գարն նշանակում է հասարակ ժողովուրդը. իսկ ոչխարն
եկեղեցականները, որոց երկօցունց ևս հոգատարութիւնը Քրիստոս որպէս թէ յանձ-
նած իցէ Պետրոսին: Այս ստութիւնը ցոյց է տուվում նրանով, որ Փրկիչը նոյն
իսկ արտօնեմունքն էր երբեմն կոչումէ Գարն (Ղուկ. Ժ. 3): «Ահա՛ ուղարկում եմ ձեզ
ինչպէս գառներ գայլոց մէջը»: Եւ երբեմն անուանումէ ոչխար (Մատթ. Ժ. 16)
իսկ ժողովուրդին միշտ կոչումէ ոչխար (Մատթ. Ժ. 6. ԺԵ. 24. Մարկ. 2. 34.
ալհ. Ժ. 1 - 28.

«... և և... և... և...», և որ «... և...» Ա՛հ, սրբան Աստուածային սէր և ներողամտութիւն էր ուսուցչի կողմից: Ա՛րչափ հեղութիւն, խորին ջերմեռանդութիւն և հպատակութիւն աշակերտի կողմից: Իսկ դուք այս գորովազուծ մխիթարական խօսքերուն, որ պատմում է սուրբ Աստուածաբանն, տեսնում էք միայն մի ցուրտ կարգ ձեռնադրութեան պատին: Ա՛խո՛ս դուք: Բայց դառնանք դէպի աւետարանը:—Յիսուս Քրիստոս ճշմարիտ է, յետ Պետրոսին առաքելական աստիճանը կրկին տալոյն, յառաջագոյն ասաց և խոստացաւ նրան, բայց ի՛նչ, մարտիրոսական մահ: Ահա այս է ճշմարտապէս առաքելական դարդ և ոչ երեքկարգեան թաղն, կամ միթէն պատին: Տեսնենք այժմ, բանն Աստուծոյ աւետարանի այս խօսքերին հետ, որ շատ պարզ և առանց ոչինչ երկասյրութեան է ասած՝ միաւորել է նախազգաստութիւն ինչ ընդդէմ ապագային սուտ մեկնութեանը նրանց: Ասում եմ համարձակ այս, ոչ միայն այս տեղ, այլ և Մասթէոսի աւետարանումն, նոյն իսկ գլխումն, որոյ միջից դուք հանում էք ձեր կարծեցեալ ապացուցութիւնը, գտնուում է և շատ բացայայտ հերքումն նրան: Կարդացէ՛ք ԻՍ. գլուխը Յովհաննու աւետարանին: Սուրբն Պետրոս, երբ լսեց, որ Տէրն յառաջագոյն յայտնեց նրան բռնութեամբ և չարչարանօք մահը՝ դարձաւ և տեսաւ իւր ետեին Յիսուսի սիրական աշակերտ սուրբ Յովհաննէսին՝ ունելով եղբայրական սէր Յովհաննէսի (*) վրայ, Պետրոսն՝ կարելի է կարծեց, որպէս թէ և նա պիտի նմանապէս մարտիրոսական մահով մեռնի. վասնորոյ այս մտածման մէջ նա իսկոյն իւրեան բնական արատութեամբ ու պարզամտութեամբն դարձաւ դէպի Յիսուս Քրիստոսը և հարցրուց «Տէ՛ր...» (կլկինի): Իրաւի Պետրոսի այս հարցումն, ըստ երևութին բղխեց գովելի աղբիւրից, այսինքն՝ այն սէրից, որ նա ունէր իւր եղբայրակցի վրայ և չէր բովանդակում իւր մէջ ոչինչ արժանի յանդիմանութեան, բայց այնու ամենայնիւ Տէրն պատասխանեց Պետրոսին խատութեան ինչ ձևով, «...» (կլկինի): Յետ այս խօսքերիս, թող թոյլտուութիւն վինի մեզ կարծել հաւանականաբար, թէ Տէրն յառաջա-

(*) Այսպէսէ մեկնարանում այս խօսքը սուրբ Յովհաննէս ստիկերեբանն.

դոյն իմանալով, որ Պետրոսի յաջորդները պիտի չարաչար կիրառութեամբ դործածեն Հռովմայ աթոռակալութեան իրաւունքը, պիտի ձեռնամուխ լինին ապօրինաբար այլ պատրիարկաց և եպիսկոպոսաց դործոց մէջ, կամեցաւ յիշեալ խօսքերովն յառաջագոյն զդուշացնելոյ նրանց այս դործողութիւնից:

Մնաց ասկա քանի մի խօսք կրտորդ ձեր ապացուցութեան մասին, որ հիննուած է Յիսուսի Քրիստոսի Պետրոսին ասած խօսքերի վրայ, այսինքն. «Բայ եւ ազաւել թեզ համար, որ ի հասարակ շարժումն և որս թն ժամանակ դարձան և իւրեքսնէրդ հասարակեալ» (Ղուկ. ԻԲ. 32): Գուք այլ և այլ խօսքերովն կարծում էք հաստատել ձեր վարդապետութիւնը սուրբ Պետրոսի նախագահութեան կամ միապետական իշխանութեան մասին: Մտիկ տուէք աւետարանին և կտեանէք, որ այս խօսքերս ասուած են իսկոյն նրանից յետոյ, երբ Տէրն արդէիկ էր իւր աշակերտաց այլ և միտք բերելն ունենալոյ զլիաւորութիւն և իշխանութիւն եղբայրակցաց վրայ և շատ քիչ ժամանակ էր անցել յետ նրանցից, երբ Պետրոսն ուրացել էր Յիսուս Քրիստոսին: Ի՞նչ հարկ կայ ասելոյ, թէ միթէ առանց Տէրի այս աղօթքին, առանց ամենակարող զօրութեան ու օգնութեանն Սատուծոյ, Պետրոսն չէր կարելի, որ հաւատիցն ընկնէր և կորչէր յաւիտեան: Շատ բաներ կարելի էր ասել Փրկչի խօսքերին բուն իմաստից վրայ, թէ «և որս թն ժամանակ դարձան և իւրեքսնէրդ հասարակեալ», բայց ես խորհուրդ եմ տեսնում ձեզ այլև խընդրում եմ մտերմութեամբ, որ կարդաք այն շրջաբերական թուղթը, որ ստորագրած և ուղարկուած է արևելեան Պատրիարկաց, Միտրապօլիտաց և Եպիսկոպոսաց կողմանէ: Եթէ դուք իրաւիցանկանում էք և որոնում էք ճշմարտութիւնը, ապա կարդացէք այն թուղթը, որոյ մէջ կըզանէք շատ բան խրատական ձեզ համար նմանապէս և պարզաբանութիւն յիշեալ Տէրունական խօսքերին (*):

(*) Ս. յն Հայ ընթերցողաց համար, որոց որով և իցէ սրտածառաւ յայտնի չէ այս չարազանց երեւելի թուղթն՝ բերենք այս սեղ նորանցից քանի մի սող բաներ թարգմանութեամբ Ռուսաց լեզուիցն. «Եթէ ընդունենք (կարծիքն սրտազանաց), թէ մեր Տէրի աղօթքն Պետրոսի համար անընդմիջապէս միաւորուած և խառն

Այս այսպէս: Այժմ ցոյց տամ ձեզ հաստատութեամբ, որ ողջ սուրբ գրոց մէջ չկայ այն, ինչ որ դուք էք անում, այսինքն՝ հաստատուն հիմն ձեր կարծեաց իմասին սրբոյ Պետրոսի ընդհանրական գլուխ և իշխող լինելոյն առաքելոց և բոլոր եկեղեցւոյն վրայ: Միայն պարտաւորուում եմ ասելոյ ձեզ յառաջագոյն, որ արեւելեան եկեղեցիքն՝ Յունաց, Հայոց, Ասորոց և ուրիշներին տակիս են սրբոյն Պետրոսի անկեղծ և ճշմարիտ պատիւ, աւելի շատ քան թէ դուք պատճառ, յարդում ենք և փառաւորում նրան համարելով իսկ և իսկ ինչպէս մեծ առաքեալ Քրիստոսի, բայց նրա անուամբն՝ զօրութեամբ չենք խմանում և ընդունում ոչ մի պապի տեղակալութիւնը:

Բայցի այն զլիսա որ և զօրաւոր տեղերից, որոց մասին խօսեցինք վերև, դուք ձեր սիրական կարծիքն հաստատելոյ համար մէջ էք բերում ն հանապէս, թէ սրբոյն Պետրոսի նախագահութեան ապացուցութիւնը Աւետարանի շատ ուրիշ տեղերում պարզ ցոյց տուած է, զորօրինակ, երբ Աւետարանիչքն յիշում են առաքելոց անունները, ապա միշտ սկսում են Պետրոսից, և այլ քանի մի այսպիսի բաներ յառաջ բերելուց յետոյ ասում էք ինքնիշխան վճռողութեամբ, թէ սուրբն Պետրոս աստիճանաւ բարձր էր միւսներից, թէ Յիսուս Քրիստոսն տուաւ նրան արտօնութիւն և իշխանութիւն աւելի քան թէ նրա ընկերացն առաքելական կարդում: — Այս կերպ ձեր դատողութեան և յառաջաբերութեան մէջ բնաւին չէ երևում այլ և նշոյլ ինչ ապացուցութեան, ըստ որում ձեր խօսքերի սկիզբն համեմատ չէ դալի նրանց կարակացութեանը: Այլ բան է զլիսաւորութիւնը և այլ իշխանութիւնը:

Նուաճէ Պետրոսի աթոռոյն հետ և թէ այն տարածում է իւր զօրութիւնը այլ և գէպի նորա վրայ նստողները զանազան ժամանակի, ապա հաւատացեում ենք Տէրի խօսքերի զօրութեամբն, որ կգայ ժամանակ, երբ այս Աստուածային Պետրոսի ուրացման պատճառաւ աղօթքն, որ շրջապէս ամենեւին նորա հասարակ ներգործութիւն կունենան որևիցէ մէկի վրայ նրա յաջորդներից, որև լաց կլինի նրան նրման դառնագին և դառնալով ինքն աւելի ևս կհաստատէ մեզ եզրայրակիցներս ուղղափառ դաւանութեան մէջ, զոր ստացել ենք ժառանգաբար մեր նախնիքներիցօ:

Աշակերտը, որ առաջինն է դասատան մէջ ցոյց առած ցուցա-
կում՝ չունի իշխանութիւն իւրեան ընկերակցաց վրայ և կարելի
է, որ իւր ուսուցչի կամօք լինի երկրորդ, երրորդ և աւելի ցած,
Ս. առաջին լինելն հաւասարաց մէջ և ունիլն իշխանութիւն ստորա-
դրելոց վրայ միևնոյն չէ: Խօսելով սրբոյն Պետրոսի գլխաւորու-
թեան մասին, դուք հետևելով ձեր նրբամտութեանը, անց էք կե-
նում դէպի այն եղբակացութիւնը՝ թէ նա ունէր իշխանութիւն-
բայց չէք ասում, թէ նա ունէր իշխանութիւն առաքելոց վրայ,
այլ միայն աւելի քան թէ ունէին միւս առաքեալքն: Միւս այլ
ևս՝ դուք շատ անգամ պարզապէս անուանում էք սուրբ Պետրո-
սին յաջորդ Յիսուսի Քրիստոսի, ապա ուրեմն համարում էք նը-
րան նաև, ոչ թէ եղբայրակից կամ ընկեր, այլ իշխան և ուսու-
ցիչ միւս առաքելոց: Չարմանք է, դուք և սորա վրայ չէք կանգ-
նում. մոռանալով առաջուայ դրած հիմանց պակասութիւնը, բա-
ցում ու երկարացնում էք ձեր հաւաքարանութեամբ: Անհասկա-
նալի է բոլորովին, թէ դուք ինչպէս համարձակ ձեր երևակայու-
թեան թևոց վրայ անց էք կենում այն ամէն խափանարկու տե-
ղերից, որ դրած են ձեզ դէմ, թէ պարզ վկայութեամբ սրբազան
պատմութեան և թէ կանոնաստոյգ և անսխառ դատողութեան,
և ապա նոյն իսկ վստահութեամբ համնում էք վերջաբանութեան,
թէ «Յիսուս Քրիստոս նմանեցնում է եկեղեցին շինութեան. Պետ-
րոսն եկեղեցւոյն համար նոյն իսկ այն է, ինչ որ հիմն շինութեան
համար: Եթէ հիմն բառնալոյ լինիք, շինութիւնը կքանդուի և
յայնմ հետէ այն շինութիւն չի լինիլ, այլ միայն աւերակ: Այսպէս
իսկ և եկեղեցին կանգնացրած է Պետրոսի վրայ. Եթէ բառնալոյ
լինիք նրան, ապա չի կարող մնալ եկեղեցին, այլ միայն կլլնին
հերձուածք. իսկ եթէ եկեղեցին բաժանէք Պետրոսից՝ ապա կը-
քանդուի այն»: Ահա օրինակ ձեր խմաստական դատողութեանցն
և այն հռետորական գեղեցկախօսութեան, որով դուք ձեր դա-
ւանակցաց հետ ի միասին փոշի և թուղբ էք ձգում աչքերէն
այն մարդկանց, որք տեղեկութիւն չունին սրբազան պատմու-
թենից և ճշմարիտ Ստուածաբանութիւնից: Բայց տեսնենք, այս
թուղբը կցրտի Ստուածոյ բանին շատակ լուսոյ առաջին՝ թէ ոչ:

Ո՞վ է իմանում, որ հիմն շինութեան համար դնում է սկզբից և ամենից յառաջ: Այսպէս և մեր Տէր Յիսուս Քրիստոսն, յետ իւր մկրտութեան և քարոզութիւնը սկսելոյ ժամանակին, հիմն դնելով իւր յատուկ քրիստոնէական, կամ նոր կաակարանի եկեղեցոյն, ընտրում է տասն երկու առաքեալներին. բայց ում է ամենից յառաջ հրաւիրում նա զէպի իւր սուրբ և շնորհալի միաբանութիւնն: Ո՞վ ամենից յառաջ զնաց Աստուածային վարդապետի ետեւն: Յայտնի է սուրբ Անդրէասն, որում ի հնուց ընդհանրական եկեղեցին սեպհականել է անուն նախակոչի (առաջուց հրաւիրած): Նա ոչ թէ միայն էր առաջին աշակերտ Յիսուսի Քրիստոսի կամ առաջին պտուղ առաքելոյ (Յովհ. Ա. 40), այլև ուսուցիչ էր եղել իւր Պետրոս եղբորը համար, զոր դուք անուանում էք զլուխ և հիմն եկեղեցոյ: Սա (սուրբն Անդրէաս) առաջ իւրեան Սիմօն եղբորն դասու և նրան ասաց Մեսիային զաիւք, որ կ'թարգմանուի Քրիստոս. և նրան բերաւ (*) Յիսուսի մօտ: (Յովհ. Ա. 41): Այս տեղ յարմար է գալիս փոքր ինչ հեռանալոյ խօսքերիցս: Եթէ Առստանդնուպօլսոյ պատրիարքունքն կամէին նմանապէս իմաստական դատողութիւն առնելոյ, ինչպէս դուք, ապա նրանք ոչ պակաս քան թէ պապերը հաւանութեամբ կկարանային հաստատելոյ իւրեանց յառաջնութիւն կամ դերագահութիւնը ընդհանուր եկեղեցոյ մէջ, ունելով ապացուցութեան հիմն այն, որ սուրբն Անդրէաս ձեռնագրեց առաջին եպիսկոպոս Բիզանդիայի սուրբ Ստաթէոսին (որից սկսեալ յաջորդաբար վարում են մինչև այսօր իւրեանց կարգը Առստանդնուպօլսի պատրիարքունքն), և բացի նրանից վախճանուեց նա Յունաստանի մէջ նըրանց պատրիարքական իշխանութեան սահմաններումն (*): Նը-

(*) Սորա մասին Հեզիկիոս Երուսաղէմայ պատրիարքն չորրորդ դարումը գրում է այսպէս: սրբազան փող Անդրէաս, առաջին ծնունդ առաքելոյ, սիւն եկեղեցոյ, վէմ յառաջ քան զվէմն (այսինքն Պետրոս) հիմը հիման (Պետրոսի), Մատենադր. փոստայ, մատեան 269:

(*) Այսպէս և Հայաստանի Աթուղիկէ Սուրբ Եկեղեցին ունի իրաւունք յառաջ բերելոյ և իւր գլխաւորութիւնը մասնանկէ ցոյց տալով նոյն իսկ հանդամամանք ու-

բանք կկարանային ցոյց տալ և ուրիշ վկայութիւն սրբոյն Անդրէասի առաքելոց դատումն պատուելի ու երեւելի լինելոյն մասին: Երբ հեթանոսքն եկել էին երուսաղէմ երկրպագութիւն տալոյ՝ խնդրեցին Փիլիպպոսից աղաչանօք, որ նրանց համար հնարք գտնէ ներկայանալոյ Յիսուսին, ապա սուրբ Փիլիպպոսն չվստահացաւ (սիրտ չարեց) ինքն ասելոյն այս մասին ուղղակի Յիսուս Քրիստոսին, այլ խմացումն տուաւ յառաջագոյն այն հեթանոսաց կամեցողութիւնը Անդրէասին և ապա նրան հետ խմասին զնաց և յայտնեց Փրկչին: (Յովհ. ԺԲ. 20—22): Բայց այս ամէնը ապացուցութիւն է միայն, որ առաքելոց մէջ կայր եղբայրական միաբանութիւն, համահաւասարութիւն և փոխադարձ սէր, վասնորոյ ինչպէս Առատանդնուպօլսոյ, նոյնպէս և միւս այլ քրիստոնէական եկեղեցւոյ քահանայապետքն բնաւին չեն կամեցել յիշեալ դրուածները այլև ուրիշ սուրբ գրոց խօսքերը, որ քիչ չեն գործ դնելոյ ու պահանջելոյ իւրեանց համար փառասիրութեան իրաւունք: Բայց դուք ցաւալի է շատ այսպէս չէք վարուում:—Այժմ դառնանք դէպի սուրբ Յովհաննու աւետարանն և կարդանք այլև քանի մի յետ վերոյիշեալներին՝ Ա. զլխումն զրաժատողերը:

Յիսուս մտիկ տուեց նրան (Պետրոսին) և ասաց, դու Սխմօնն ևս Յօնանի որդին, դու կոչուիս Անիաս, որ կթարգանի (*) Պետրոս

արտօնութիւնքը Բարթուղիմէոս և Թադէոս Առաքելոց մասին, որք Տէրից վիճակուեցան Հայերին ինչպէս քարոզք և աւետարանիչք, որոց և նշխարուած ոսկերքը կան մեր մէջ և որոց աթոռը ստացաւ կենդանի մարտիրոս Գրիգորիոսն և այլն:

(*) Այս տեղ հարկաւոր է յիշելն նոյն ծաղրական խարդախութիւնքը Սխիթարեան միաբան Գաբրիէլ վարդապետին, որ իւր Բացատրութիւն շարականաց անուանեալ գրքումը սրբոյն Պետրոսի միւս առաքելոց վրայ կեղծեալ գլխաւորութիւնը հաստատելոյ համար, ինքնակամ ու առանց խղճմտանաց Ափսոս բառը թարգմանում է գրելուի, որ ամենեւին սխալ է և աւելի քան թէ սուտ. ըստ որում Ափսոս անունդ կամ որ Յունաց լեզուաւ բուն հնչումն ունի Քիֆոս, Ասորոց բառ է և նշանակում է Վճիռ, ասպարսի, ինչպէս և ինքն Յովհաննէս առաքելալն է թարգմանում նրան Յունաց լեզուաւն՝ Փեդրոս, Փեդրոս, որ Հայերէն Վճիռ ասել է: Պատմութեանց և թարգմանչաց հաստատուն վկայութեամբն, Քրիստոս իւր քարոզութիւնը ասում էր Ասորի լեզուաւ Գաղ-

(Յովհ. Ա. 42) : Ահա ինչ ժամանակ էր , երբ նա տաացաւ իւր նոր անուանը և ոչ թէ այն ժամանակին , որք որ դաւանեց Տէր Մեսիային որդի կենդանի Աստուծոյն : Իսկ սրանից ինչ է հետևում : Այն , որ Տէրն Սիմոնին Պետրոս կամ վէմ (քար) անուանելուց չկարգից նրան հիմն իւր եկեղեցւոյն , այլ միայն յայտնեց ձեւակերպութեամբ նորա կարծր (պինդ) ուղիղ , հեռի ամէն նրբացուցութիւնից և տարտամ անխտասութիւնից բնութիւնը : Այս օրինակ իսկ Տէրն ասաց , երբ որ տեսաւ Նաթանայէլին . «հա՛ սուրբ երեմիայի տղան» , որ նրանում խաբէութիւն չկայ (Յովհ. Ա. 47) : Այսպէս Չեբեղիայի որդւոցն անուանեց «սրբաւոր» (բաներեզէս) (Մարկ. Գ. 17) նրանց բնութեան բարձրութեան պատճառաւ : Սիմոն կանանացւոյն—Շմաւոն (Ղուկ. Զ. 15. Մատթ. Ժ. 4. Գործ. Ա. 13) որովհետև նախանձայոյզ էր նա : Գիտել պէտք է այլև , որ Տէրն չէ անուանում սուրբ Պետրոսին այս նոր անուամբս ոչ այն ժամանակին , երբ խօսում է իւր աղօթքի մասին նրան համար «սր նրա հասարակ լոյսն է» և ոչ այն դիպուածին , երբ երեք անգամ հարցնելովն «էրա՞ս ես էն?» ձգում է նրան շփոթման մէջ , իսկ երեք անգամ հրամայելովն՝ «սրա՞նցս» կրկին կանգնեցրուց նրան առաքելական աստիճանումն : Սիմոն , Սիմոն . ահա սատանայն ուղեց , որ քեզ խախալէ ցորենի պէս և այն «Սիմոն Յոնանի սրբի էրա՞ս ես էն?» ինչ էր սորա պատճառը : Յայտնի է նրան համար էր , որ իւր ուրանալովն սուրբն Պետրոս փոխել էր իւր սովորական հաստատութիւնը , անհաւատարիմ էր դուրս եկել իւր նոր անուանը : Ահա թէ ինչպէս դուք ձեր համախոհաց հետ ի միասին , սուրբ զրոց այս խօսքերիցն հանում էք հաստատութիւն

դէպիանին հետ խառն , որ այն ժամանակին Պաղեստինումը հասարակ լեզու էր չրէից և այն լեզու աւն իսկ խօսելով Պետրոսի հետ , անուանեց նրան Քիֆոս . իսկ Յունարէն գլուխըն ասում է քիֆոլի և ոչ թէ քիֆոս : Ահա՛ թէ ինչպէս ֆրիստոս անուանեց Պետրոսին և ինչպէս պատգազաւան դիտուն վարդապետները համարձակ առանց մեղք համարելոյ փոխում են Աստուածադիր անունը Սիմոն , ֆրիստոս նրան ֆիլիաս կոչեց , աւետարանիչը թարգմանեց ֆէդրա , Պետրոս , վէմ . իսկ նրա՛ք սուտ համարելով (մեղայ) ֆրիստոսին և աւետարանչին , կեփասը թարգմանում են քլափ :

ձեր կարծեաց՝ Պետրոսի միւս առաքելոց վերայ գերազանցութեան և նրան բոլոր եկեղեցւոյ վերայ իշխանութեան մասին : Համաձայնուեցէք, որ սա շատ անսովոր և տկար եղանակ է պաշտպանելոյ ձեր հաւանած կարծիքը :

Եթէ բառնալոյ լինիք Պետրոսին, ապա կքանդուի և եկեղեցին, այսպէս էք հաստատում դուք : Բայց ասէք, միթէ անյսպէս սովորեցրուց Սատուածային վարդապետը, անյսպէս կարծեց նոյն ինքն Պետրոս առաքեալն : Փոքր ինչ ժամանակ յառաջ մինչև այն, երբոր Յիսուս Քրիստոսն կատարեց խաչին վերայ մեր փրկութիւնը և իւրեան անդին արեամբն սրբեց իւր սիրեցեալ Հարսն սուրբ Եկեղեցին, Նա՛ Տէրն մեր կամեցաւ ցոյց տալ իւր աշակերտաց խոնարհութեան վեհագոյն օրինակը : Երկնային հացկերոյթը վերջանալոյն յետոյ, փրկիչն ջուր առաւ, լցրուց տաշտակը և սկսեց աշակերտաց ոտները լուանալ և այն ղենջակովն (փեշտամալ), որ միջքունն պատած ունէր, սրբում էր : Շփոթուած դարմանքով իւրեանց Սատուածային վարդապետի այսպիսի չափազանց խոնարհութեան վերայ՝ աշակերտքը համարձակուեցան ընդդիմանալ նրան : Բայց Պետրոսն, որ համարեան միշտ հաստատուն և աներկիւղ բնութեան տէր էր, վստահացաւ ընդդիմախօսել ասելով՝ «Տէր աստուծո՛ւմ ես եմ սրնէր» լուանալս . . . Դաս եմ սրնէր» յափտեան լղբեւելուան» : Իսկ Տէրն ինչ : «Թէ՛ որ ես սրնէրդ լուանամ՝ պատասխանեց Պետրոսին, «Դաս եմ սրնէր քաթեմ լուանալ» : այսինքն՝ չես լինիլ իմ աշակերտ, չես ժառանգել երկնքի արքայութիւնը : Արժանում էք դուք միթէ, թէ այս հասարակ սպառնալիք էր, որ ոչ մի ժամանակ չպիտի կատարուէր : Բայց այս կերպ մտածելն Տէրունի խօսքերի մասին, անիրաւութիւն կլինէր, և մտիկ տուէք, որքան հեռի էր այս օրինակ մտածմունքից սուրբ Պետրոսն, որ պատասխան տուաւ Փրկչին, թէ «Տէ՛ր, «Է եմ սրնէր» մեայն, Բայց եմ յերնէր» (Յովհ. ԺԳ. 5—9) : Քիչ խօսքեր են սոքա, այլ սրչափ կարելին է նրանց մէջ պարզապէս երևում է այն դօրեղ աղղեցութիւնը, որ շարժել էր Պետրոսի ողին Փրկչի սաստելը լսելուց : Պարզապէս յայտնի է, որ նա ընկել էր անպատմելի երկիւղիմէջ միմիայն մխոք բերելով, թէ մի դուցէ նրան հրաժարումն լինի

Աստուածային և սիրական վարդապետաց, վասն որոյ անասանան խոնարհութեամբ և իւրեան բնական արագութեամբն նա առաջադրում է Տէրին լուանալոյ ոչ միայն իւր ոտները, այլ և ձեռները և գլուխը: Տեսէք, այս դիպուածումս քանի պարզ ձեւերում է, իբր հայելոյ մէջ՝ ողջ բնութիւնը Պետրոսի, ինչպէս մարդ: Այսպիսի բնութեամբ մարդն կարող էր ձգել դէպի ինքն մեր կատարեալ յարգանք ու սէրը, եթէ մեք այլև չխմանայինք, թէ այս մարդս վերջումս լցուել էր Աստուծոյ սուրբ Հոգւովն: Ի հարկ է այս խակ սիրելոյ արժան յատկութեանց համար Տէրն և հրաւիրեց սուրբ Պետրոսին, տալով նրան առաքելական պաշտօն, որն շատ անգամ արժանացաւ առանձին նախապատուութեան, — բայց ոչ մէնակ, այլ Յովհաննու և Յակոբոսի հետ իմիասին:— Այժմ դառնանք դէպի ձեր ասացուածն, թէ «եթէ բառնալոյ լինիք (վերացնել) Պետրոսին, ապա կքանդուի եկեղեցին»: Այս խօսքերիս բոլորովին անհաստատութիւնը հասկանալոյ համար, դուք երևակայացրէք ձեզ, որպէս թէ դուք ինքներդ ներկայ գտնուելուց Տէրն ասաց Պետրոսին, «բայց ե՞նչ հետ բաժին լինի»: Այն ժամանակ դուք միթէ կարող էիք համարձակուիլ ասելոյ Փրկչին. «եթէ դու հեռացնելոյ լինիս Պետրոսին, ապա կքանդուի քո եկեղեցին, յետ նորանից կմնան միմիայն աւերակներ, միայն հերձուածք և մոլորութիւնք: Եւ ձեզ համար դարհուրելի չէ մտածելն սորա մասին: . . . Ապա ուրեմն միտք բերէք, որ չափից դուրս աշխատելով հաճոյ ու հասանելի լինելոյ համար Հռովմայեցւոյ եպիսկոպոսին, դուք անարգում ու վիրաւորում էք խակ Փրկչին, դուք անարգում էք այլև Պետրոսին, որ ունէր այնքան խորին խոնարհութիւն, մինչև միանգամ ընկնելով Փրկչի ոտները, ասաց նրան. «Տէ՛ր, ե՞նչն էց հետոս քեզ», եւ լսուց որ ես մեղաւոր մարդ եմ» (Ղուկ. Ե. 8): Յառաջագոյն գիտեմ ձեր ընդդիմաբանութիւնը, որ պիտի ասէք, թէ այս բոլոր իմ ասած բաները եղել են մինչև Հոգւոյն Սրբոյ գալուստը և թէ սուրբն Պետրոս ստացաւ լիովին իշխանութիւն ողջ եկեղեցւոյ վրայ, յետ Յիսուսի Քրիստոսի համբարձմանն: Մեք կխօսենք այս մասին ըստ կարգին, խակ այժմ թոյլ տուէք ինձ վիճքր ինչ, դառնալ միւս անգամ դէպի այն տեղերը

Յովհաննու աւետարանից, որոց վրայ մեր խօսակցութիւնն էր վերև:

Գանք քննենք սրտի մտօք և անաչառ դատողութեամբ Փրկչի այն խօսքերը, որ ասաց նա իւր աշակերտաց, յետ նրանց ոտները լուանալոյն: «Միթէ դիտում էք թէ ես ինչ արի ձեզ: Գուք «ինձ վարդապետ և տէր էք կոչում և լաւ էք անում, ինչու որ «ես իսկ այն եմ: Ապա թէ որ ես տէրս և վարդապետս ձեր ոտներն լուացի, դուք ևս պէտք է, որ միմիանց ոտները լուանաք: «Ինչու որ ձեզ մի օրինակ տուի, որ ինչպէս որ ես ձեզ արի, դուք «ես անէք: Ճշմարիտն ճշմարիտն ասում եմ ձեզ, ծառայն աւելի «մեծ չէ քան թէ իւրեան տէրն: և ո՛չ ես ուղարկուածն աւելի մեծ «է քան թէ նա: որ ուղարկեց նրան: Թէ որ այս գիտում էք, ես աւելի երանելի էք՝ թէ որ այս անէք: (Յովհ. ԺԳ. 12—17): Ս. յս խօսքերս Տէրն ասաց փոքր ինչ յառաջ մինչև իւրեան ջոկուլն աշակերտաց հետ, շարչարանքն և համբարձուիլն դէպի երկինք: Եւ այսպէս անձ Տէրն ո՛չ միայն չէ նշանակում որը և իցէ առաքեալներից իւրեան յաջորդ կամ փոխանորդ, այլ նաև մի ջոկ հողացողութեամբ նախադրուչացնում է նրանց փառասիրութեան ցանկութիւնից և սնապարծութիւնից, նրանց բոլորին անուանում է իւրեան ծառայ և առաքեալ: Բայց ո՞ւմ է առանձինն հարկաւոր այսպիսի նախադրուչութիւնն: Ի հարկէ՝ այն բովանդակումէ իւր մէջ խոնարհութեան մասին պատուիրանք, որ տուաւ յաւիտենական ժամանակի բոլոր քրիստոնէից. իսկ ո՛չ մի տեղ այս պատուէրը, դժբաղդարար այնպէս յայտնի չէ քանդուում, ինչպէս Հռովմայ եկեղեցումն: Թագուն բան չէ, որ ողջ պապադաւանքն համբուրում են պապի ոտներն կամ հողաթափները. եպիսկոպոսունք, ծիրանակիր վարդապետք (կարդինալ), տխողոսաւոր պատրիարքունքն համբուրում են պապի ոտները, այլև իսկոյն յետ նրա կոչումն տալոյն, երբ նա դեռ ևս չէ ձեռնադրուած լինում իւր չափազանց արտաքոյ կարգի բարձր աստիճանումն: Սրանից աւելի միւս այլ ինչ պարզ բան պէտք է, որ սրբոյն Պետրոսի յաջորդի անուն ունսղին ցոյց են տալիս իւրեանց մէջ անհամեմատ առաւելութեամբ փառաւորութիւն, մեծութիւն և իշխանու-

Թիւն, քան թէ ցոյց տուաւ ինքն Պետրոսն կամ այլ և նրա վարդապետն: Տէր և վարդապետն լուացաւ իւր ծառայից՝ աշակերտաց ոտները, իսկ պապն տալիս է համբուրելոյ իւր ոտները իւրեան հաւասար եպիսկոպոսաց և հովուապետաց եկեղեցւոյն: Ինչպէս նա միտք չէ բերում այս դիպուածումս Տէր Յիսուսի Քրիստոսի խօսքերը. «ժողովն տեւէ մեծ չե՞ր + ան իւր իւրեան Տէրն և ոչ ևս ուղարկանան տեւէ մեծ ե՞ր + ան իւր նա, որ ուղարկէց նրան: Թե՛ որ այս հիշատակէ՛ք, ևս տեւէ երանելի՛ ե՛ր, իւր որ այս անե՛ք»:

Այժմ սկսենք խօսելոյ այն քանի մի առարկութեանց վրայ, ինչպէս խոստացանք վերև, այսինքն սուրբ Պետրոս առաքելոյ յատուկ արժանաւորութեան և աստիճանի մասին, ըստ որում սովորացնում և վկայում է սրբազան պատմութիւնը և արեւելեան առաքելական ուղղափառ սուրբ եկեղեցին:

Իրաւի, սուրբ գիրքն երբեմն անուանում է Պետրոս առաքելին առաքելոց առաջինն, իսկ ուղղափառ մեր եկեղեցին համարում ու մեծարում է նրան իբրև նախագահ: Նա առաջինն էր, որ դաւանեց Յիսուս Քրիստոսին Մեսիայ, որդի Աստուծոյ կենդանւոյն. առաջ նրան խոստացաւ Փրկիչն երկնքի արքայութեան բանալիքը կամ իշխանութիւն կապելոյ և արձակելոյ մարդկանց մեղքերը: Առաջինն նա, յետ սուրբ խնկարեր կանանցն, արժանացաւ տեսնելոյ յարութիւն առած Տէրին (Ղուկ. ԻԳ. 34): Առաջինն նա մօտացաւ դէպի նա Տիբերիայ ծովի ափին մօտ: Նա առաջինն քարձրացրուց իւր ձայնը Պենտէկոստէի օրը և դարձրուց դէպի Քրիստոս իւր քարոզութեամբն երեք հազարի չափ հոգիներ իւր ունկնդրողներից: Նա առաջինն սկսեց մկրտելոյ հեթանոսներին, նա միւս առաքելաներից առաջ խօսեց Նրուսադէմի Եկեղեցումն: Բայց այս աւագութիւն (առաջին լինելն) նորա հաստատութեան պարտաւորութիւնն էր, որպէս թէ տուած նրան կամ Յիսուս Քրիստոսից, կամ ընտրութեամբ միւս առաքելոցն, որ կարող լինէր սեպհականելոյ նրան առանձին իրաւունք և ձայնազոյն իշխանութիւն: Ա՛յ, ամենին ո՛չ. ըստ որում սուրբ գրոց մէջ բնաւին չէ երևում, թէ Քրիստոս տուած լինի կամ Պետրոս առած լինի Քրիստոսից բողոքական կամ դոնէ ընդարձակ իշ-

խանութիւն և իրաւունք և ո՛չ իսկ ընդհանուր քրիստոնէից և ևկեղեցւոց վրայ, թո՛ղ թէ նոյն իսկ առաքելոց վրայ: Բայց միայն այս է յայտնի, թէ Քրիստոս տուաւ Պետրոսին միայն առաւելութիւն և յառաջնութիւն պատուոյ և կարգի (*). նրա ժամանակի յառաջնութիւն ունելոյն աղաղաւ. ինչու որ՝ ինչպէս պատմում է (Մատթ. ԺԶ. 18—20) Քրիստոս Տէրն մեր առաջ հարցրուց առաքեալներից ժողովրդեան հաւատոյ մասին. ո՞վ են մարդիկ համարում ինձ և երբ նրանք ասացին ժողովրդեան կարծիքը, Փրկիչը կամեցաւ հրապարակաւ ճանաչելու իւր աշակերտաց հաւատը, վասնորոյ և ասաց նրանց. իսկ դուք աշակերտներդ ինչպիսի ոք էք համարում ինձ. այն ժամանակը Պետրոս իւր ջերմ սիրոյն համար յառաջ ընկաւ ժամանակաւ քան թէ միւս առաքեալները ու ասաց. Դու ես Քրիստոսը որդի Աստուծոյ կենդանոյն: Այս գործովս Պետրոս եղև ժամանակաւ առաջին հաւատալոյ սրտով, ժամանակաւ առաջին բերանով դաւանելոյ և ժամանակաւ առաջին քարոզելոյ ուրիշներին հրապարակաւ օծութիւն ու որդիութիւն Քրիստոսի: Արեւմն աշապիսի եղանակաւ առաջին լինիլը հաւասարադօր ընկերաց մէջին, չէ ցոյց տալիս իրաւունք և իշխանութիւն ունելը ընկերաց վրայ: Այսպէս և սուրբ Պետրոսն առաջինն եղև միայն իւր հաստատուն հաւատովն, վառվառն հաւատարմութեամբն դէպի Յիսուս Քրիստոս և սրտի մասօք ջերմեռանդութեամբն դէպի նորա սնուան փառքն: Առաջին լինելն նորա սեպհական արդիւնքն է և ո՛չ պաշտօն կամ մի ջոկ կոչումն: Իւր յատկութիւնք ու արժանաւորութիւնքը նա չէր կարող յանձնել ումեք, ինչպէս բնական ընդունակութիւն ու ձիրքն ուրիշի ընծայելը անհնարին է: Նա ունէր բարձր կոչումն առաքելոյ, բայց այս կոչումն միապէս ունէին ո՛չ միայն բոլոր տանն երկու աշակերտքն, այլև միւս եօթանասունքն, դոր ընտրեց ինքըն Յիսուս Քրիստոսն: Նա ունէր պարտաւորութիւն քարոզելոյ

(*) Ամբրոսիոս երեւելի վարդապետն Նատիւաց այս մասին ծանր վկայութիւն է տալիս (Գր. 22. մարդեղ. Գլ. Գ.) ասելով՝ առաջնութիւն դաւանութեան և ոչ թէ պատուոյ, առաջնութիւն հաւատոյ և ոչ թէ կարգի:

աւետարանը, կատարելոյ եկեղեցւոյ խորհուրդները և առաջնորդելոյ դէպի փրկութիւն : Այս պարտաւորութիւնը ունէին նմանապէս և այլ առաքեալները : Ինչպէս Պետրոս եղև առաջին քարոզիչ Երուսաղէմ քաղաքումն, այսպէս և միւս առաքեալները եղևն առաջին քարոզիչ և հիմնադիր եկեղեցւոյ այլև այլ քաղաքաց և ազգաց մէջ, զոր և տեսնում ենք նրանց վարուց պատմութիւնից : Այս պարտաւորութիւնը որպէս և ամէն մի այսպիսի պաշտօն կարելի է յանձնուէր յաջորդաց, ինչպէս որ և իսկ յանձնուած էր առաքելոց կողմից նրանցով ընտրած եպիսկոպոսաց, եկեղեցւոյ հովուացն : Բայց պարտաւորութիւն կամ մի ջոկ աստիճան իշխանութիւն ունենալոյ առաքելոց վրայ և Քրիստոսի միակ յաջորդ և փոխանորդ լինելոյ սուրբ Պետրոս չունէր ինքն, ապա ուրեմն չէր կարող և յանձնել կամ տալ ուրիշին : Այսպիսի պաշտօն կամ պարտաւորութիւն նա չատացաւ ոչ Քրիստոսից և ոչ առաքեալներից, ոչ յառաջ քան համբարձումն Տէրի և ոչ յետ նրանից, այլ ընդ հակառակն ամէն առաքեալները առանց ջոկութեան, ինչպէս որ և նրանց յաջորդները, սուրբ զրոց մէջ կոչուում են պաշտօնեայ, սպասաւոր և այլն, որոյ հաստատութիւնը կարող էք տեսնել (Կողոս . Ա . 24—25 . Ա . Կորնթ . Գ . 4 . Դ . 1 . Բ . Կորնթ . 2 . 4 . ԺԱ . 23 . Եփես . Գ . 7 . Ա . Տիմոթ . Գ . 6 . և ուրիշ շատ տեղերում :—Այս հասարակ և մտաւորական կշռադատութիւններից դառնանք այժմ դէպի աներկբայի դիպուած քն, որոց վրայ նրանք հիմնուած են, այսինքն դէպի հաստատուն և անփոփոխելի վկայութիւնն բանին Աստուծոյ :

Ես համաձայն եմ ձեզ հետ, որ աւետարանիչքն հաշուելով առաքելոց անունները բոլորեցունց կամ թէ ոմանց միայն, շատ անդամ առաջինն անուանում են սուրբ Պետրոսին : Բայց և այս ձեր աւարկութիւնը չէ կարող լինիլ ոչինչ ապացուցութիւն, ըստ որում սուրբն Պաւղոս, որ զրեց նոյնպէս, ինչպէս և աւետարանիչքըն Հոգւոյն Սրբոյ թելադրութեամբն, անուանում է զլիսաւոր առաքեալներին ուրիշ կարգով ասելով, «Յ-ի-բ-ս-ն», կե-թ-ս-ն (Պետրոս) «և Յ-լ-հ-ան-ն-է-ս-ն», որ նրանք էին խորհուրդ «ի-ն-է-ր-ն» (Գաղ . Բ . 9) : Բակոբոս Տէրի եղբայր անուանուածն նախ առաջինն յօրինեց առաքելոց

հարկաւոր կղած վճիռը (Գործ. ԺԵ. 13) որոյ մէջ և նորա անունը յառաջ է դրած քան Պետրոսինը : Բացի սոցանէ սուրբ դիրքն միշտ չէ յիշում Պետրոսին յառաջ քան միւսների անունները, այլ շատ անգամ ևս զնում է երկրորդ կամ և վերջի տեղումըն, ինչպէս կայ դրած (Ա. Կորնթ. Թ. 5. Գաղատ. Բ. 9. Մարկ. ԺԶ. 7. Յովհ. Ա. 44. Ա. Կորնթ. Գ. 22 և այլ ուրիշ տեղում) : Ինքն իսկ Պետրոս առաքեալն անուանում է իւր անձը ո՛չ Բլ-ի, այլ երեւելի (Ա. Թղթ. Ն. 1.) ասելով՝ երեցներին ազաչում եմ, ինչպէս մին երէցընկեր և Քրիստոսի չարչարանացն վկայ՝ այսինքն երէցներին ընկեր, հաւասար, երիցութեան կցորդ : Նա իւր երկու Թղթոց սկզբումն անուանում է իւրեան լոկ առաքեալ և ո՛չ Բլ-ի, ո՛չ Բլ-ի կամ Բլ-ի և ո՛չ եպիսկոպոս Հռովմայ և այլն, ինչպէս դուք էք այժմ ինքնակամ հաւանութեամբ համարում նրան կամ Հռովմայ պապին : Թողենք ասածներս. սուրբ Պետրոսի միւս առաքելոց թուումն առաջին յիշելը, ընդհակառակն, հաստատութիւն է նրա միւսերի հետ հաւասարութեանը, ըստ որում նա մի թուահամարով է հաշուում միւս առաքելոց հետ, և այս կարգով չէ կարելի միաթիւ հաշուել նրան այլոց հետ, եթէ իրաւի նա միւսների վերայ գլուխ, մեծաւոր և իշխան լինէր՝ ինչպէս Թագաւորը ոչինչ օրինակաւ մին թուոյ մէջ չէ մտնում իւր հպատակաց հետ, ո՛չ իշխողը՝ ստորադրելոց և ո՛չ տէրը՝ իւր ծառայից հետ, որովհետեւ չէն հաւասար, մի տեսակ, դասակից կամ նոյնասեռ թուարկութիւն բանի մասին : Սորա հակառակ՝ Քրիստոսի անսուտ բերանը վկայում է, որ առաքեալքն եւք-ի ևն, ինչպէս ասած է, թէ մի է ձեր ուսուցիչը և դուք ամէնքդ եղբարք էք և այլն (Մատթ. ԻԳ. 8—12) : Իսկ առանձին խօսելով Պետրոսի հետ, ասաց. և դու մին ժամանակ դառնաս ուրացութիւնից) և քո եւք-ի երեւելի հաստատես (Ղուկ. ԻԲ. 32) : Այս մտօք գրեց և Յովհաննէսն, թէ և այս բանս դուրս եկաւ եւք-ի երեւելի միջումն (Յովհ. ԻԱ. 23) : Ապա ուրեմն բոլոր առաքեալքն հաւասար են միմիանց հետ իրաւանց բանի մասին և չկայ ո՛չ ոք նրանց մէջին Բլ-ի և Բլ-ի միւսերին, կամ հպատակ և ստորադրեալ, այլ առաւելութեան մասին, ինչպէս յիշած ենք ուրիշ տեղ, միայն երեւելի և

յառաջնութիւն ժամանակի ըստ ծննդեան, կամ առաջինն պատուոյ և կարգի արտաքին պատահմանց աղապար, որոյ մասին և Պետրոսն լինում է երէց կամ աւագ (մեծ) եղբայր առաքելոց . նրանց դասումն և ոչ թէ տիրապետող, գլուխ կամ իշխող ընդդէմ Յիսուսի Քրիստոսի պատուիրանքին, որով քեզ և եւե՛լ միմիանց յայանապէս արգելուած է նրանց (Մատթ . Ի. 25—28 . Ղուկ . ԻԲ. 24—26 . Մարկ . Ժ. 42—44 . Բ. Կորնթ . Ա. 23 . և այլն) :

Աւելի զօրաւոր նշանակութիւն տալոյ դիտմամբ այն հանդամանաց, որ աւետարանիչքն առաքելոց անունները յիշելոյ ժամանակին առաջինն Պետրոսի անունն են ցոյց տալիս, դուք առանձին ուշադրութեամբ աւելացնում էք ասելով՝ թէ Պետրոսն անուանուում է առաջինն, չնայելով որ նա չէր հրաւիրուած, յառաջ քան թէ միւսերն, առաքելական ծառայութեան և չէր մեծ ուրիշներից այլև հասակաւ : Թէ նա առաջինն չհրաւիրուեցաւ առաքելութեան պաշտօնի, մեք արդէն խօսացինք, իսկ թէ նա մեծ չէր միւսներից ամօք, սորա մասին դուք բնաւին ոչինչ ապացուցութիւն չունիք : Ի հարկէ մեք ևս չենք կարող յառաջ բերել հաստատութիւն ստոյգ և հաւանական վկայութեամբ, թէ Պետրոսն տարօք մեծ էր միւս առաքելականներից, բայց սակայն այսպէս է կարծիքն հին երևելի մատենագրին, զոր դուք համարում էք ձեր եկեղեցւոյ սրբոց թուումն, այսինքն երանելի Հերոնիմոսին, որ շատ տարիներ բնակուում էր Բեթղէհեմումն և այն, երբ միայն ևրեք հարիւր տարի էր անցել առաքելական ժամանակներից յետոյ : Այսպէս է և արևելեան ուղղափառ եկեղեցւոյ հին աւանդութիւնը : Ամէն մեր հին սրբոց պատկերներումն, որոց օրինակներն վիր են առուած հին նախագաղափարներից (սկզբի օրինակ), սուրբն Պետրոս առաքելոց դասումը նկարուում է ծեր, կարճ, ալետր մորուքով և մազերը թափուած գլխով : Այլա ուրեմն դուք չէիք կարող գտնել բաւական ընդդիմախօսութիւն, եթէ մի ոք սկսէր հաստատել, թէ սրբոյն Պետրոսի սուած էր առաջի տեղն առաքելոց դասումն իրաւունք խօսելոյ միւս նորա ընկերներից յառաջ միայն այն պատճառաւ, որ նա մեծ էր նրանցից տարօք : Կա՛ն՝ դիցուք թէ այս ձեր կարծիքն ճշմարիտ է : Բայց սորանից

քննէ դուրս գալիս: Ի հարկէ այն, թէ սուրբն Պետրոս առաջինն է առաքելոց կարգումն և ոչ թէ նրանց իշխան, զիսկ կամ մեծաւորն էր նա: Բաւ, աւետարանումն չէ երևում, որպէս թէ Տէրն սուած լինի Պետրոսին առանձին արտօնութիւն միւսերից աւելի, մանաւանդ թէ Յովհաննէսից և Յակոբոսից: Նա տէրի մօտ ներկայ էր Թաբօր լեռան վրայ, Յայրոսի մեռած աղջկան կենդանացնելոյ ժամանակին, Քեթսեմանի պարտիզումն (բախչայ), երբ Տէրն առանձնաբար աղօթում էր. բայց ամէն տեղ այս պատուոյս նորա հետ արժանացան և երկու որդիքն Զեբեդիայի: Շատ անդամ Պետրոսն լսեց Տէրից բաւական սաստիկ յանդիմանութիւններ. «Եւրահասար էնչո՞ւ երկրեօք» (Մատթ. ԺԴ. 31): Տէրն ասաց Պետրոսին՝ երբ որ սա սկսել էր խեղդուիլ Տիբերիայ ծովումն. Յեր քնա՛ ինչանից սարանայ, ինչ քայլափոխութիւն է» (Նոյն ԺԶ. 23): Այս խօսքերս նմանապէս ասուեցան Պետրոսին՝ թէև ընդդիմաբանութիւնն, որ նա արեց Տէրին, ծաղկեց եռանդուն սէրիցն դէպի նա: Այս խոսք սէրս Պետրոսին միտքը ձգեց հրաման խնդրելոյ Տէրից, որ շինէ Թաբօրի վերայ երեք տաղաւար (չատրր), բայց աւետարանիչն այս անցքը պատմելուց՝ նկատմամբ ասում է նրա մասին. «Եր էրաս, եւ էնչ էր Խօսաս» (Ղուկ. Ի. 33): Վերջին ընթրեաց ժամանակին, երբ Տէրն ասաց, թէ նրանցից մինն մատնելու է նըրան՝ Պետրոսն չհամարձակուեցաւ հարցնել ուղղակի խոսք Յիսուս Քրիստոսից մատնողի անունը, այլ խնդրեց այս մասին Յովհաննէսից և Տէրն պարզեց Յովհաննէսին խորհուրդը, որ մինչև այն ժածկուած էր ինչպէս Պետրոսից, նոյնպէս և միւս առաքեալներից: Քեթսեմանի պարտիզումն Յիսուս Քրիստոս աղօթում էր արիւն քրտինք թափելոյ չափ, խոսք նորա աշակերտներն քնի մէջ էին, որոյ աղաղաւ Տէրն մասնաւորապէս յանդիմանութիւն ասուաւ Պետրոսին, սրտաճառաւ, որ նա քիչ մի ժամանակ նրանից յառաջ խոստացել էր գնալոյ նրա ետեւն, եթէ այլև մեռնելոց լիցէ (Մատթ. ԻԶ. 40):

Յետ յարութիւն առնելոյ Տէրին, հրեշտակն ասաց խնկաբեր կանանց. գնացէ՛ք նրա աշակերտներին և Պետրոսին ասացէ՛ք, թէ անն նա ձեզանից յառաջ կգնայ Գալիլեա (Մարկ. ԺԶ. 7): Այս

խօսքերիցս դուք հանում էք ապացուցութիւն Պետրոսի միւս աշակերտաց վերայ աւելի արտօնութեանց համար . բայց ես կարծում եմ, ինչպէս և ամէն մի անկողմնասէր ընթերցող կհամաձայնուի, որ այս տեղ աւելի պիտոյ է հասկանալ ներողամտութիւն դէպի Պետրոսն այն մասին, որ նա թէպէտ և ուրացել էր, այլ չէր դրկուած ուրախութիւնից լսելոյ այլոց հետ Տէրի յարութեան համբաւը:

Քանիցս անգամ Տէրն յայտնեց իւր գերազանց սէրը դէպի իւր ընտրած աշակերտներն, անուանեց նրանց իւրեան եղբայրներ (Յով. Ի. 17), բարեկամներ (Յովհ. ԺԵ. 14) . բայց ոչ մի տեղից սուրբ գրոց չէ երևում, որպէս թէ նրանցից որեիցէ մէկին նա յայտնած լինի յատկապէս առանձին նախապատուութիւն, կամ թէ տուած լինի իշխանութիւն այլոց վրայ: Նա յետ յարութիւն առնելոյն, առաջի օրը երևեցաւ սրբոյն Պետրոսի, բայց նորանից յառաջ երևացել էր խնկարեր կանանց, երևացել էր այլև առանձնաբար Ղուկասին և Աղէօպոսին, և ջոկ կերպիւ հաւատացրուց սուրբ Թոմասին իւր յարութիւն առնելը: Միմիայն սուրբ Յովհաննէսն է անուանուում այն աշակերտը, «պէր Յովհաննէս եր» (Յովհ. ԺԳ. 23. ԻԱ. 20): Որ և միայն Քրիստոսի լանջքովն (դօշովն) ընկաւ (ԺԳ. 25). նա միայն համարուեց «նահ» (ԻԱ. 23). անուանուեց հաւատար Պետրոսի և Յակօրոսին «ե» (Գաղ. Բ. 9): Նրան է յանձնում Յիսուս խաչի վրայ լինելուց իւր ամենասուրբ մայրը և նըշանակում է նրան, որպէս թէ իւրեան «ե» նրա որդի. (Յովհ. ԺԹ. 27): Յայտնի է, որ սուրբն Յովհաննէս երկար ժամանակ ապրեց և վախճանուեց Նփեսոս քաղաքումն. ապա ուրեմն Նփեսացւոց կաթիկոսոսքն ինչո՞ւ չունեցան այլև երբէք միտ չբերին ունելոյ այս իրաւամբք առանձին առաւելութիւն այլոց վրայ եկեղեցական քահանայապետութեան մասին: Ի հանրկէ այն պատճառաւ, որ Տէրի սէրը, ինչպէս և երկնքի արքայութիւն ստանալոյ իրաւունքը կարելի է գտնել միայն արժանաւոր արդեամբք և գործով և ոչ թէ նրանք անցնում կամ մնում են մինից միւսոյն ժառանգարար:

Եղբայրական սէր, կատարեալ հաւատարութիւն և համակամ

միաբանութիւնն Պետրոսի միւս առաքելոց հետ զգալի ձևով նը-
կարագրուում են սրբոյն Յովհաննու յետադայ պատմութեան մէջ :
«Մին տեղ էին Միսօն Պետրոս և Թօմասն երկուորեակ (Չուխտակ)
«անուանուածն և Նաթանայէն, որ Գալիլիացւոց Անուայիցն էր և
«Չերեղիայի որդիքն և աշակերտներիցն այլ ևս երկու հոգի: Մի-
«սօն Պետրոսն նրանց ասաց. ևս զնում եմ ձուկն բռնելոց, նը-
«րանք ասացին, մեք ևս կգանք քեզ հետ և այն»: (Յովհ. ԻԱ.
2—3): Ահա, միթէ այս տեղ մի բան կայ, որ նման լինի մեծա-
ւորի վարմանց իւր ստորագրելոց հետ: Միթէ չէք տեսնում դուք,
ինչ կերպ սերտ ու մտերիմ սիրով կապուած էին առաքելաքն,
ինչպէս երգում է և մեր եկեղեցին: Միթէ սորա նման կայ ինչ
պապի այժմեան յարաբերութեանց մէջ դէպի նորան ստորա-
դրեալ եպիսկոպոսունքն, որք համբուրում են նորա ոտները և մե-
ծարում ու բարձրացնում են ինքեանց եպիսկոպոս անուանելով
և այն ~~առաքելական~~ ~~ախարհ~~ ~~չարհի~~: Դատեցէք ինքներդ, աղաչում եմ,
առանց կողմնապահութեան այս խօսքերը: «~~առաքելական~~ ~~ախարհ~~» (ուչ
Հոգւոյն Սրբոյ), այլ ~~առաքելական~~ ~~ախարհ~~»

Ահա քանի մի խօսք ընդդէմ այն անհաստատ ձեր հակառա-
կաբանութեանն, որով դուք չգիտեմ ինչ իրաւամբ և խղճմամբ,
աշխատում էք, որպէս թէ մեզ մոլորութեան մէջ կարծելով, հա-
նէք ու տանէք դէպի ուղղութիւնը: Մի քանի խօսքեր սուրբ զը-
րոց միջից դուք վեր առած ձեր դատողութեան համար իբր հի-
մըն ապացուցութեանը, շատ անգամ առարկութեան աւելի զօրու-
թիւն տալոց մտօք, անձնապատասխանութեամբ համարձակ ասում
էք. թէ «վերջ չէր լինիլ բնաւին, եթէ կամենաք յառաջ բերել մի
ըստ միովէ սրբազան պատմութեան մէջ եղած հաստատութիւն-
ները սրբոյն Պետրոսի նախադահութեան և իշխանութեան մա-
սին»: Նախ ընթացիմ քննաբանութիւնից ըստ բաւականին պար-
զապէս երևում է, որ Յիսուս Քրիստոսն իւր աշխարհ գալոյ սկըզ-
բից մինչի երկինք համբարձուին, շտուաւ սուրբ Պետրոսին իշ-
խանութիւն նրա ընկերաց վրայ առաքելական կոչման և իրա-
ւանց մասին, չնչանակեց նրան իւրեան յաջորդ կամ տեղակալ:
Այժմ քննենք, թէ սուրբն Պետրոս ստացաւ համեմատաբար միւս որ

և իցէ առանձին իրաւունք Տէրի երկինք համբարձուելոյն յետոյ :
 — Գուք ասում էք, թէ առաքելոց գործոց մէջ սուրբն Պետրոսի
 պաշտօնը ու իշխան լինելն միւս առաքելոց վրայ հաստատում է
 այլև ուրիշ փաստերով, յորոց մինը յառաջ էք բերում այն դիպուածը
 ծըն . երբ Տէրի համբարձման յետոյ Պետրոսն առաջարկեց իւր
 ընկերաց ընտրել տասներկու երորդ առաքելալ Յուդայի փոխա-
 նակ : ուստի առաքելալքն շոկեցին երկուսին, յետոյ աղօթք արին
 և Տէրն նրանց վիճակ քցելովն հաստատեց Մատթիային : (Գործ .
 Ա . 21—26) : Ճշմարիտէ . բայց միթէ դուք կարծում էք, թէ այս
 յիշած անցքն վկայութիւն է օգտակար ձեր եկեղեցւոյն համար :
 Ոչ, ըստ որում այս դիպուածումս սուրբն Պետրոս ոչինչ իշխա-
 նութեան իրաւունք կամ վարչութիւն չունէր և զոչ չտուաւ, ոչ
 թէ ինքն մէնակ ինքնիշխանօրէն ընտրեց Մատթիային, այլ միւս
 առաքելոց հաւանութեամբն, ինչպէս գրուած է : Եւ երկու (մարդ)
 ինքնուրուի (առաքելալքն) . . . և աղօթք անելով . . .
 նրանց վերայ վիճակ ցեցին . . . : Ս. յայէս պատահեց և ուրիշ
 անգամ եօթն սարկաւաղաց ընտրութիւն լինելոյ ժամանակին
 (Գործ . Զ . 2—7) . երբ ոչ մէնակ Պետրոսն այլ «անձնական»
 աշակերտներ թողնութիւնը և «անձնական» ձեռնհաս չէ (և ոչ Պետ-
 րոսին մէնակ), որ Աստուծոյ խօսքն լսելէ . . . նրանց այս
 պէտքական բաներին վրայ ինքնուրուի . . . և ձեռք բերն նը-
 րանց վրայ . . . կարդացէք և միւս դիպուածոյ մասին պատ-
 մութիւնը, (Գործ . ԺԵ . 2—30) և կտեսնէք, որ ոչ մէնակ Պետ-
 րոսի հրամանաւ կամ վճռովն վերջացաւ առաքելոց մէջ ծագած
 հակասակութիւնը, այլ ողջ եկեղեցւոյն, այսինքն առաքելոց և ե-
 պիսկոպոսաց ժողովոյն, որոց կողմանէ և նրանց իսկ (և ոչ
 Պետրոսին) անունովն գրուեցաւ հեթանոսաց վերայ ուղարկած
 վճռաթուղթը, «ձեռն վարան ծառայութեան» հաճոյ երևեցաւ, որ ընտ-
 րեալ մարդիկ «անձնական» ձեռն մօտ . . . ինչու որ Սուրբ Հոգւոյն
 և ձեռն հաճոյ երևեցաւ, որ լնաւ աւելի բնուն շքեմէն ձեռն վրայ և
 այլն» : Ս. յս մասին կիսուենք և յետոյ, բայց կարդալով այս դիպ-
 ուածոց պատմութիւնը, թոյլ տուէք ձեր խղճմանքին ազատօրէն
 դատողութիւն տալ, թէ այսպէս են վարվում և ձեր քահանայա-

պետքն, ինչպէս վարուցին Պետրոսն և միւս առաքեալքն : Ըստ մեծի մասին պապն ինքն է նշանակում և հաստատում Եպիսկոպոսներին և ոչ մին ժամանակ ոչինչ նշանակութիւն Եպիսկոպոսական կոչման չէ կարող լինիլ իսկական ու օրինաւոր, մինչև որ պապն չհաստատէ նրան : Ուրեմն յայտնի չէ, որ պապն սեպհականում է իրան ոչ այն իշխանութիւնը, որ ունէր նրա առաքելական նախորդն, այլ այն, որ առաքեալքն համարեցին սեպհական միայն Յիսուսի Քրիստոսին, ինչպէս միմիայն զլիսոյ կենդեցւոյն :

Գուք անուանում էք սուրբ Պետրոսին յաջորդ և տեղակալ Յիսուսի Քրիստոսի, բայց ասացէք, աղաչում եմ, երբ ստացաւ նա այս պաշտօնս : Ե՛րբ և ո՞վ ձեռնադրեց կամ կարգեց նրան այս բարձրագոյն աստիճանիս : Գուցէ Պենտէկոստէի (Հոգեդալուսա) օրը : Այ, ըստ որում այն օրը ամէն առաքելոց, որ Սիմօնի վերնաւան մէջն էին, երևեցան բաժանուած լեզուներ ինչպէս կրակից և նստեց նրանց ամէն մինի վերայ : Եւ ամէնքն սուրբ Հոգւով լցուան : (Գործ. Բ. 3—4) : Բնաւին անհիմն է կարծել, թէ սուրբն Պետրոս այս գերազանց երևելի դիպուածներումս, այս հանդիսաւոր Քրիստոսի կենդեցւոյն նուիրադործելոյ ժամանակն ստացած իցէ առանձին նուիրական իրաւունք, գերագոյն շնորհք Հոգւոյն Սրբոյ. բայց նա ասում էք դուք, առաջինն էր, որ բարձրացրուց իւր ձայնը քարոզութիւն տալոյ համար : Այդպէս է, պատճառ՝ որ նա առաքելոց բերան կամ ներկայացնողն (առաջնորդող) էր, բայց ոչ երբէք իշխան կամ ուսուցիչ նրանց : Ընկերութեանց մէջ, որ բաղկանում են քանի մի միմիանց հաւասար անդամներից, միթէ համարուում է իշխան կամ զլխաւոր նա, որ խօսում է միւսերից յառաջ և շատ : Միթէ չէ պատահում, ընդ հակառակն, որ զլխաւոր կամ նախապահ անդամն ամէնից քիչ և յետոյ է խօսում (*) Բայց սուրբն Պետրոս կարող էք ասել դարձ-

(*) Աւելորդ չեմ համարում այս տեղ յիշելն հեթանոսաց դատողութիւնը, որ պատահեց Վիկտորնացւոց Վիտորա քաղաքումն : Սուրբ Բառնաբասն, որ որ լուս էր կացել կամ քիչ էր խօսում, նրանք համարեցին լուսնթաղ (Դիոս) չասուածոց

րուց դէպի Քրիստոս երեք հազար հոգիներ , իսկ փոքր ժամանակից յետոյ այլ նա հինգ հազար : Իրան է , այս շնորհաց մեծ և հրաշալի զօրութիւնն էր , որ ներգործում էր սրբոյն Պետրոսի բարանովն . բայց միտք բերէք և այն , որ սուրբն Պաւղոս , նա՛ որ ինքն իրան անուանում է փոքր կամ նայելով ժամանակին այլև յետինն առաքեալներից , նրանց ամէնից աւելի աշխատեց : Արատազաւ և ուղղափառ մեր եկեղեցին անուանում է և սուրբ Պաւղոսին նմանապէս նախադահ , ինչպէս և Պետրոսին , այլ սա չէ նըշանակում , թէ այն համարում է նրան կամ այլ միւս առաքեալքն զլուխ եկեղեցւոյ :

Դուք ցոյց էք տալիս այլև այն հանդամանքն , թէ սուրբն Պետրոս Իսրայէլի ժողովրդեան մեծամեծաց երեսին խօսեց բոլոր առաքելոց կողմանէ (*) (Գործ . Գ . 8) : Բայցի ասելոյ , որ այս հանդամանքն ինքն ըստ ինքեան ոչինչ ապացոյցութիւն չէ կարող տալ ձեր օգտին . ևս խնդրում եմ , մտադրութեամբ կարդաք նոյն իսկ զլուխը , ուր յատկապէս ասած է . « Պետրոսի և Յովհաննէսի համարձակութիւնն տեսնելով և զխտելով՝ թէ տղէտ և « առանց ուսմունքի մարդիկ են , դարմանում էին , պատճառ , որ « ճանաչում էին նրանց , որ Յիսուսի հետ էին (հմբ . 13) : Յետոյ « Պետրոսն և Յովհաննէսն պատասխան տուին և նրանց ասացին . « Վճիռ կարեցէք , եթէ արժան է Աստուծոյ առաջին , որ ձեզ աւելի « ազանջ դնենք քան թէ Աստուծոյն : Ինչու որ մեք չենք կարող չխօսել այն , ինչ որ տեսանք և լսեցինք » (19—20) :

Թագաւոր , իսկ սուրբ Պաւղոսին փայլածու մոլորակ (չերմէս) , պատճառ , որ նա էր խօսքի առաջնորդն , (Գործ . ԺԳ . 12) :

(*) Հիանալի է հոգւոյն Սրբոյ շնորհաց զօրութիւնը . այն մարդը , որ քիչ ժամանակ յառաջ սւրացել էր Յիսուս Քրիստոսին , երկիւղ կրելուցն քահանայապետի աղախնոյ (ղարաւաշ) և ծառայիցը , այժմ՝ յետ հոգւոյն Սրբոյ իջմանն աներկիւղ և համարձակ դաւանում է Յիսուս Քրիստոս խոստացեալ զրկիչն , նոյն իսկ քահանայապետին և ժողովրդեան հոգւոր մեծամեծաց մօտին : Ինչպէս նկատելու չէ այս դիպուածումս , որ պատաղաւաններն կամենալով բարձրացնելոյ մարդոյ փառքը , մտանում են զանցառութեամբ Աստուծոյ զօրութիւնը և փառքը :

Չարմանալի է, որ դուք յետ այդքան ձեր ճիշտ հետաքրքրու-
 թեան և աշխատելոյն դուրս բերելոյ սուրբ գրոց միջից այն ա-
 մէն տեղերը, որ կարելի է (ձեր հասկացողութեամբն), շատ թէ
 քիչ հաստատութիւն լինէին Հռովմայ եկեղեցւոյ միապետական
 իրաւանցն, մոռացել էք միւս այլ երևելի անցքը, զոր կարող էիք
 մեկնելոյ նմանապէս վերաբերութեամբ դէպի ձեր օգուտը: Ասա-
 ծըս այն է, որ առաքելոց Նրուսաղէմի մէջ եկեղեցումն (ժողով)
 սուրբն Պետրոս բարձրացրեց իւր ձայնը ուրիշներից առաջ և նը-
 րա ձայնը, նրա վարդապետութիւնը ընդունեցին բոլոր առա-
 քեալքն և միւս եղբայրքն: Ի՞նչպէս է պատահել, որ դուք այս-
 պիսի երևելի ապացուցութիւնը թողել էք առանց մտադրութեան:
 Գուցէ, այն պատճառաւ, որ համարել էք ձեր դատողութիւնը և
 առանց նրան, աւելի պարզ և հաստատուն: Ինչպէս և իցէ ձեր
 կարծիքն միայն յիշեալ դիպուածքը ունի այսպիսի չափազանց
 վսեմութիւն, որ բնաւին հարկ չէր ձեզ մոռանալոյ, ըստ որում
 նրա մէջ ամէնից բացայայտ պարզուումէ նախապետական կամ
 առաջնորդող եկեղեցւոյ կառավարութեան յատկութիւնը: Առաքե-
 լական եկեղեցին Նրուսաղէմի մէջ օրինակ դարձաւ բոլոր յետագայ
 թէ տեղական, թէ մասնաւոր և թէ ընդհանրական եկեղեցիներին (ժո-
 ղովք) համար: Այսինորոյ ևս հարկաւոր եմ համարում խօսել նրա
 մասին փոքր ինչ մանրամասնաբար՝ աւելի քան թէ խօսեցի ու-
 րիշ անցքերի վրայ, որ դուք յառաջ էիք բերում ձեր կարծեաց
 հաստատութեան համար: Անտիոքումն քրիստոնէից մէջ, որ դար-
 ձել էին Հրէաներից, տարածայնութիւն ծագեց, որպէս թէ հեթա-
 նոսները, որ կամենում էին մկրտուել՝ պէտք է յառաջ կատարեն
 հին կտակարանի թրպատութեան մասին դրած օրէնքը: Պաւղոս
 և Բառնաբաս առաքելոց այս կարծիքն չհաւանելոյն աղաղաւ,
 մեծ հակառակութիւն և վիճմունք ծագեցին. ուստի այս խնդրքի
 վրայ խորհուրդ անելոյ համար, Անտիոքի քրիստոնեայքն սահ-
 մանեցին, որ Պաւղոս և Բառնաբաս առաքեալներին իւրեանցից
 մի քանիսին հետ ուղարկեն Նրուսաղէմ. (դուք գուցէ կարծում
 էք՝ թէ Պետրոսին ինչպէս Յիսուսի Քրիստոսի տեղակալի մօտն,
 ոչ, այլ ամէն — — — էլ — — — երեքնեւ մօտն), Երբ որ հասին Նրուսա-

արևմտ, Պաւղոս և Բառնարաս ընդունուեցան եկեղեցւոյն և արտօնուե-
 շնայ և երեցնեցն, որոց նրանք և պատմեցին իւրեանց հեթանոսաց
 մէջ քարոզութեան յառաջադիմութիւնը: Մի քանիսն հաւատա-
 ցեալ Փարիսեցիներից խօսեցին և այս տեղ հաստատելով, որ մը-
 կըրտուած հեթանոսներն պէտք է կատարեն Մովսէսի ծիսական
 օրէնքը: Այն իսկ ժամանակին, ինչպէս յիշեցինք վերև, կազմուե-
 ցաւ Նրուսաղէմի մէջ եկեղեցի (ժողով) առաքեալներից, մեծերից
 (երէցներից և ուրիշ քրիստոնէաներից): Նրկար խորհրդակցու-
 թիւն և շատ քանակիւն անելոց յետոյ՝ սուրբն Պետրոս վեր կացաւ
 եղբարց մէջ և առաջարկեց նրանց, ասելով, թէ հաւատացեալ հե-
 թանոսաց վղի վրայ պէտք չէ դնել լուծ, որ չկարողացան վեր
 առնել ինքեանք հրէայքն: Նրբոր ողջ ժողովն լուռ կացաւ, վեր
 կացան Պաւղոս և Բառնարաս առաքեալքն և պատմեցին, թէ
 Աստուած որչափ նշաններ և հրաշքների արաւ նրանց ձեռովն
 հեթանոսաց միջումն: Եւ երբ նրանք վերջացրին իւրեանց խօս-
 քերը, վեր կացաւ սուրբն Յակոբոս, (որ Տէրի եղբայր անուան-
 ուեց, Քաղ. Ա. 19. Նրուսաղէմի այս առաջին անդամ ժողով-
 ուած եկեղեցւոյն առաջի եպիսկոպոսն, որ մայր և ծնող է միւս
 ամէն եկեղեցիներին, Գործ. ԻԱ. 18) (*) և սկսեց իւր խօսքը

(*) Այսպէս է վկայում սուրբ Յովանն ոսկերերանն, ճե'ս սկիզբն ՂԳ. ճառին ա-
 ռաքելոց գործոց վրայ: Շատ նշանաւոր են այս մեծ քահանայապետ և ընդհան-
 րական վարդապետիս խօսքերն նոյն իսկ ճառի մէջ: «Այն տեղ (նախնի առաքե-
 լած ժողով եկեղեցւոմն) չկար ոչինչ ամբարհաւածութիւն, այլ գերազանց բարեկար-
 գութիւն»: Եւ ան'ս յետոյ Պետրոսին խօսում է Պաւղոսն և ոչ ոք չէ արգելում
 նրան, Յակոբոսն սպասում է և չէ յառաջ խաղում ձեռք և նրան արտօնած էր երե-
 ցաւիւնը: Այն իսկ ճառի վերջումն սուրբ Յովանն ոսկերերանը ասում է: «Թէպէտ
 մեք ունինք յայանի կոչումն (քրիստոնէի), այլ ոչ հերձուածոց գլխաւորաց, բայց
 ունինք մեծամեծ խորհրդակցութիւն և եկեղեցւոյ կարողութիւն: Մեք չունինք ուսու-
 ցիչներ երկրիս վրայ. այլ անիւն փայն փնջ, որ երկնքումն է: Մատթ. ԻԳ. 10:»
 Մտադրութեան արժանի է և այն, որ առաքելոց ժողովի գրած վճռին մէջ Յա-
 կոբոսի անունը յառաջ է յիշած քան թէ Պետրոսինը. Նոյնպէս այն դիպուածն, որ
 Պետրոս բանտից ազատուելուց յետոյ գնաց Մարիամու տունը և ուղարկեց պատ-
 մել Յակոբոսին իւր ազատութիւնը, (Գործ. ԺԲ. 17.

հրամանի ինչ ձևով. «Տարբէի, եղբա՛ր, էն՝ լեցե՛ք . . . ես եւս երաւասե՛մ եմ համարս», որ նեղութիւն չլան նրանց, որ հեթանոսներէն . եր էն դարնսմ դեպէ Ասորս-սմ» և այլն (Գործ . ԳԼ . ԺԵ): Յակոբոսի այս խօսքերից յետոյ ոչ ոք այլ ևս ընդդիմաբանութիւն չարեց և չառաջարկեց իւր դատողութիւնը, այլ հաճոյ երեւեցաւ արտօնելոյ և երէցսնոյ և ասէն եկեղեցւոյն, որ ուղարկեն Անտիոքացի քրիստոնէից մօտ Պաւղոսին, Բառնաբասին, Բարսաբայ կոչուած Յուդային և Շիղային, որոց ձևովն և գրեցին ժողովի սահմանած այս բանս: «Արտօնելերս և երէցներս և եղբայրներս եղբայրներեք, որ հեթանոսներէն ե՛ք ողջոյն (լինի) մեզ մաքան ժողովութիւնէրէս հաճոյ երեւեցաւ, որ մեր սերելի Բարնաբասին և Պաղասին Սորբէ Հոգւոյն և մեզ ևս հաճոյ երեւեցաւ, որ բնութն ատելի բերն չբնե՛նք մեզ վրայ, և այլն»: Ահա, այս է առաջին եկեղեցական ժողովն և առաջին ժողովական (կաթողիկէ) կարգաւորութիւնն: Ապա ասէք, ի՞նչ մասնակցութիւն ունէր այս ժողովի մէջ Պետրոս առաքեալն: Յայտնի է, համահաւասար ամենեկիմք միւս առաքելոց հետ, թէ և նրա անունը այլև չէր յիշած ժողովական սահմանադրութեան մէջ: Ժողովի մէջ սուրբ Յակոբոսն խօսում է աւելի իշխանութեամբ քան թէ Պետրոսն, ասելով՝ լեցե՛ք է՛ն՝, ես երաւասե՛մ եմ համարս»:

Նւ տեսէք, ի՞նչպիսի յարգանօք և մտերմութեամբ ընդունելի եղև և ի՞նչպիսի ճշդութեամբ կատարուեցաւ այս ժողովական կարգաւորութիւնը այլ և նոյն իսկ առաքելոց կողմանէ. «Քե որ մեք, ե՛մ սերելե՛ց (եկած) հրեշտակ ատարանէ մեզ ատելե՛քան թէ այն, որ մեք ատարանեցինք «Յեղ, (նա) նշան լինէ» ասում է սուրբ առաքեալն Պաւղոս (Գաղատ. Ա . 8): Բացի այս ասածներէցս նոյն իսկ առաքեալն չվախեցաւ «հակառակ ինձ» սուրբ Պետրոսին (Գաղ . Բ . 11): Յաւալի է, որ դուք ոչինչ չէք խօսում առաքելական եկեղեցւոյն (ժողով) մասին: Յանկալի էր դիտել, թէ ի՞նչ կերպ դուք կմտնէիք նրան դէպի ձեր սիրական դատողութեան օգուտն: Խնդրեմ, քննեցէք յիշեալ անցքը, կարդացէք ինչպէս ողջ ԺԵ . գլուխն, նմանապէս և ԻԱ . ԳԼ . 17—16 համարն Գործ . Առաք . և թէ առանց կողմնապահութեան դատելոյ իցէք, ապա անշուշտ շատ բաց և յայտնի կերպիւ կտեսնէք, թէ ինչպէս անփոփոխ ու հաւատարիմ է մնացել մեր արևելեան ճշմարիտ առաքելական եկեղեցին թէ գրուածոց և թէ սուրբ առաքելոց օրինակին, և ընդհակառակն, թէ ո՞ր-

քան հետի յետ է քաշուել Հռովմայ եկեղեցին հախասկզբնական
և զլիաաւոր եկեղեցւոցն թէպէտ և ձեր եկեղեցին ինքնական սեպ-
հականում է ինքեան անուն ընդհանրական արտօնական (*):

Չեմ զարմանում, որ դուք ձեր գրուածոց մէջ ընդդէմ մեր ե-
կեղեցւոցն չէք յառաջ բերում այլև միւս անցքը, որ յիշած է նը-
մանապէս Գործք առաքելոց գրքումն, դուցէ այն պատճառաւ,
որ այն պարզ, ուղղակի և վճռահատարար հերքում է ձեր վար-
դապետութիւնը: Ասածս այն է, որ առաքելալքն Նրուսաղէմ եղած
ժամանակին լսելով թէ սուրբն Փիլիպպոս, որ եօթանասուն աշա-
կերաներից մինն էր, դարձրել է դէպի Քրիստոսի հաւատն և մկրտել
է Սամարիայի բնակիչներին: «— լարկէն նրանց Տօր Պեդրոսին (**) Յովհան-

(*) Յովհաննէս Պատրիարքն Արտանդնուպօլսոյ, երբ առաջին անգամն՝ վեցե-
րորդ դարու վերջիցն սահմանեց ինքն իշխան իւրեան համար պատուոյ անուն
«ընդհանրական եպիսկոպոս» սորա մասին հակառակ դուրս եկան Պեղագիտս և մեծն՝
Գրիգոր պապերը, թէ այդ պատուանուան կոչումը ոչ մէկին Նպիսկոպոսներից բնա-
ւին պատշաճ չէ, և չոկ՝ գրիգոր Պապը յայտնի գրեց, թէ անուանակոչութիւնը է
բոլորովին «հայհոյական, թիւնաւոր (դէհուրլու), սնտի, անբարտաւան, պիղծ,
յիմարական, սուտ քրիստոսական, դիւական և այլն, (Գր. Գ. Թղթ. 32. 34, Գր. Զ.
Թղթ. 4. 24. 30. 36. և այլն): Սա գրեց այն մասին և Սերանիկի Նւսերիոս եպիս-
կոպոսին առանձին թուղթ. (Գր. Է. Թղթ. 69), որոյ մէջ յետ երկար գանգատելոյն այս
ապօրէն կոչման վերայ, կամելով փաստերով հաստատել իւր խօսքերը, ասում է թէ՛
«մանաւանդ որ ինքն առաքելոց հիշատակ Պետրոսը, . . . ոչ մի ժամանակ չանուան-
ուեց «ընդհանրական արտօնական», . . . ըստ որում բոլոր առաքելալքն ինչպէս ընդհանրական
եկեղեցւոյ անգամք, մի ընդհանրական գլխոյն երբոյ էին՝ որէ Յիսուս Քրիստոս: Ահա
վկայութիւնն այն իսկ Հռովմայ հայրապետին, որ յայտնի խօսելով խոստովանու մէ, թէ
ո՛չ Պետրոս, ո՛չ ինքն և ո՛չ ուրիշն եպիսկոպոսներից կարող չէ անուանուիլ «ընդհանրական
կամ ընդհանրական» եպիսկոպոս, ոց ասել է միապետական տէր կամ գլուխ:

(**) Այս բանս յայտնապէս քարոզում է, որ առաքելոց գումարը (ժողովն) իրաւունք
ունէր Պետրոսին վրայ, ըստ որում ամէն օգտաւէտ կամ բան հասկացող մարդկանց յայտ-
նի է, որ «— լարկէն» (առաքելն) հեղինակութեան ու իրաւաբանութեան գործ է և յա-
տուկ սեպհական միակ իշխանութեան իրաւանց, իսկ «— լարկէն» (առաքելն) ծառայու-
թեան պարտաւորութիւն է կամ նշան ստորագրեալ հպատակի: Ուրեմն որովհետև ա-
ռաքելոց դասը «— լարկէն» Պետրոսին յանձնական հարթով, ասպա սրանից ուղիղ դուրս է
գալիս այն ապացուցութիւնը, թէ Պետրոսն առաքելոց դասուն իրաւաբանութեան
տակն էր, ինչպէս մասն բոլորին կամ անգամը գլխոյն երբոյ, որէ միայն Յիսուս Քրիս-
տոս: (Տե՛ս երանելի Գիլբոսնի գրուածը այս մասին ՅՂԳ. եկեղեցեաց իշխան, մտած. ԺԱ.)

«նեոնի», որ վեր ելին և ազօրեալ որին նրանց լրաց, որ Սուրբ Հոգին առնէն» (Գործ. Ը. 14): Ահա, զարմանալի չէ այս կարգից արտաքոյ անցքն և ինչպէս համարձակուեցան առաքեալքն «լրեւելա Քրիստոսի յաջորդին և տեղակալին . . . կարգացէք կրկին և կողմնասիրութեան ախան յետ դնելով զարմացէք և ինքներդ, թէ ինչպէս այսքան զօրաւոր ապացոյցութիւնքն չեն ունեցել ձեր վրայ ներդործութիւն և դուք այլ ևս աշխատում էք բռնաւորել արեղակի լուսոյ պէս պարզ ճշմարտութիւնը ձեր մտացածին ու բողոքովին անհիմն հակաճառութեամբն: Աշխատում էք և չդիտենք ինչ յուսով հաւատացած էք, որպէս թէ կարող էք յետ քաշել մեզ ճշմարիտ ընդհանրական և առաքելական եկեղեցւոց: Ոչ, մեք կասենք ձեզ նոյնը՝ ինչ որ ասացին մին ժամանակ Պետրոս և Յովհաննէս առաքեալքն «լինէ՛ր իրեցե՛ք, ելէ՛ք արեւմտէ՛ Սուրբոց առաջի», որ ձեզ առեւէ մեզ քննէ՛ք քան թէ Սուրբոցն» (Գործ. Գ. 19):

Բայց ես դեռ ևս չեմ վերջացրել խօսքս, սուրբ գրոց մէջ քիչ չեն այլ ևս ուրիշ ապացոյցութիւնք ընդդէմ ձեզ, ընդդէմ ցաւակցութեան արժանի մոլորութեանց Հռովմայ եկեղեցւոյն: Մեր արեւելեան և ձեր արեւմտեան եկեղեցւոյ մէջ վիճամանց սուարկայն, ինչպէս կարծում են ձեր մեծանուն գիտնական հեղինակներն, եկեղեցւոյ կառավարութեան եղանակի մասին է: Բայց Սատուածաշնչի գեղեցիկ հեղինակներիցն ոչ ոք այնպէս լիութեամբ և ճշդութեամբ չէ խօսում Քրիստոսի եկեղեցւոյ դասակարգութեան կողմանէ, ինչպէս սուրբ նախագահ Պաւղոս առաքեալն: Իսկ դուք ջնայելով որան, ոչ մի վկայութիւն չէք բերում նրա խօսքերից և գրուած ներից ոչ ձեր վարդապետութիւնը հաստատելոյ և ոչ մեր վիճմունքը հերքելոյ համար: Սա շատ օտարոտի բան է և մեծ երկբայութիւն է պատճառում ձեր ճշմարտութեան և մտերմութեան մասին: Քննենք և այս առարկայն:

Սրբազան Պաւղոս առաքեալն ասում է Յիսուսի Քրիստոսի մասին, թէ Հայրն Սատուած «նրան քլաւի որոս եկեղեցւոյ առն բանեցի լրաց, որ այն նրա հարկն է» (Եփես. Ա. 22): Ուրեմն եկեղեցին է մարմին կամ ժողովուրդ երևելի, իսկ նրա գլուխն աներևոյթ. միւս ուրիշ զլիսոյ մասին, որ միջակայեակ իցէ երևելի մարմնոյ և աներևոյթ

զլխոյ մէջ՝ ոչ մի խօսք չկայ: Եթէ սուրբ առաքեալքն համարէին Պետրոսին երեսի զլուխ եկեղեցւոյ, եթէ նոյն իսկ այս պաշտօնը, որ ասել է զլուխ եկեղեցւոյ և յաջորդ Քրիստոսի համար էին հարկաւոր և կարգադրեալ լինէր Յիսուսի Քրիստոսի կողմանէ, ապա Պաւղոս Առաքեալն, կամ Հոգին Սուրբ, որ խօսեց Պաւղոսի բերանով՝ անշուշտ ծանուցումն կտար մեզ այն մասին: Բայց այսպէս չէ, այլ ամենեին սորա ընդդէմն է մեզ յայանում սուրբ գիրքն: Պաւղոս առաքեալն նմանացնում է Յիսուսի Քրիստոսի և եկեղեցւոյ կապակցութիւնը մարդոյ և կնոջ խորհրդաւոր միաւորութեանն: «Մարդն է կնկան զլուխն, ինչպէս որ և Քրիստոս եկեղեցւոյ զլուխն է, և ինքն (իւրեան) մարմնոյ Փրկիչն է: Բայց ինչպէս որ եկեղեցին հնազանդ է լինում Քրիստոսին, այնպէս և կանայքն իւրեանց մարդկանցն ամէն բանի մէջ: Մարդիկ, սիրեցէք ձեր կանանցը, ինչպէս որ Քրիստոսն սիրեց եկեղեցին: Ինչու որ բնաւին չկայ ոչ ոք, որ իւրեան անձն ատէ, բայց կերակրում է և պահպանում նրան, ինչպէս որ և Քրիստոսի»: (Եփես. Ե. 23—29): Եւ այսպէս մին մարդ է և մին կին. մին Յիսուս Քրիստոս—և մին եկեղեցի: Երրորդ անձն չէ կարող լինիլ մարդոյ և կնոջ մէջն թէպէտ և մարդն բացակայ իցէ: Չէ կարող և եկեղեցին ունիլ միւս ուրիշ զլուխ բացի աներևոյթէն և ուրիշ փեսայ բացի երկնաւորէն: Բայց դուք հետևողք և ծառայական մեծարողքդ պապին, նշանում էք նրան այսպէս ասել՝ ձկնորսի մատանեաւ, Քրիստոսի եկեղեցւոյն հետ, մարդ—ունող կինը տալիս էք ուրիշին, մանաւանդ, որ այս ուրիշն փոքրէ նման առաջնոյն, օրինաւորին (*):

Դուք գուցէ կասէք «եկեղեցին է ժողովուրդ կամ հասարակութիւն, բաղկացած անհամար և դանադան անդամներից, իսկ ամէն մին այսպիսի հասարակութեան մէջ պէտք էին զլխաւորք

(*) Չեք հնարած համեմատութիւնքն պապին զօրաց զլխաւոր հրամանատարի հետ, որպէս և հիւսն (տիւլիար) Յովսէփի հետ, որ նշանադրեալ էր Սրբուհի Մարիամին շատ անյարմար են և մտադիւր քննութիւնից յետոյ դաւնում են ազգութիւնք ընդդէմ ձեզ ինքներիդ:

և ստորադրեալք, կառավարիչք և կառավարողք» • ճշմարիտ, այդպէս է • բայց ովք երևեալապէս կառավարում եկեղեցւոյն: Յայանի է եկեղեցւոյ հովիւները, որոց Հողին Սուրբ կարգում է և սրբում իւր շնորհօքն: Սա ոչ իմ և ոչ մարդկային վարդապետութիւնն չէ, այլ Հողւոյն Սրբոյ է, որ յայտնեց մեզ Պաւղոս առաքեալի բերանովն: Չէ՞նչէ՞նչէ՞, ասում է նա եպիսկոպոսաց, «Յեր էն՝նէրէր և տէն «հօրէր (սիւրու), որ Սուրբ Հոգին յեզ վերտայս որոն հարանս, որ արածոյնէ՛՛ Տերէ «ժողովուրդը (եկեղեցին) նրան, որ էր արեւուն արեւոց» (Պործ . Ի . 28): Նըկատեցէք այս տեղ մտադրութեամբ «արածոյնէլ ժողովուրդը» (եկեղեցին) խօսքերը, ոչ ջոկ ու բաժանուած կամ մարմնաւոր եկեղեցիները է ասած, այլ եկեղեցին, որ հասկանալի է միայն մինը: Ապա ուրեմն ոչ միմիայն որ և իցէ առաքելոյն կամ եպիսկոպոսին է յաննած արածացնելոյ (կառավարելոյ) Տէրի և Աստուծոյ եկեղեցին, այլ նրանց ամէնին, ողջ ժողովոյն դասուց առաքելոյ, եպիսկոպոսաց և հովուաց եկեղեցւոյն: Ուրիշ տեղում սուրբ զրոյց մէջ Պաւղոս առաքեալն խօսում է այս մասին այլ ևս աւելի մանրամասնաբար, պարզ ու յայտնապէս. Նա (Յիսուս Քրիստոսն) «մէն ասեմին որոնս, որ արածուլ լինին, մէն ասեմին մարգարէ, մէն ասեմին տէրարանիւ, մէն ասեմին հովիւ և վարդապետ: Որ սուրբերը հասարակուն պաշտամունդի համար, Բրեւոստի «մարտոյն շինուիւան համար: Մինչև որ տէնէս հասնէնէ հասարակ մէն միաբանութեան մէջ և Աստուծոյ Որդոյ գերութեան մէջ և խորտակուցող լինին՝ Բրեւոստի խորտակ հասնէ շո՛ւտէ»: Եփես. Գ . 11—13): Ուրեմն Տէրն մարդկանց սովորացնելոյ և հաստատելոյ համար հաւատքի մէջ, նրանց առաջնորդելոյ համար դէպի բարձրագոյն բարոյական կատարելութիւնը, կարգեց իւր եկեղեցումն, ոմանց առաքեալ, ոմանց աւետարանիչ, ոմանց հովիւ և վարդապետ. բայց ոչ ոքին չնշանակեց զլուս եկեղեցւոյ և իւրեան յաջորդ կամ տեղակալ:

Ուրապա գուցէ կասէք դուք գտնուումէ եկեղեցումն այն կենդրոնը, որ կարող լինէր միաւորել և շինել ողջին մի հասարակութիւն, տայր ամէնին վայելուչ կարգաւորութիւն, կեանք ուղղութիւն: Ամէնից յառաջ այս հարցմունքիս իմ պատասխանին այն է, թէ որ Տէրն ցոյց տուած չլինէր մեզ այս կենդրոնը, սալա մեզ հարկ չէր և որոնելն նրան. բայց այս կենդրոնը կայ, նա բացայայտ ցոյց տուած է սուրբ զրոյց մէջն, միայն նա ոչ Պետրոսն է և

ոչ պապն, այլ ինքն իսկ Յիսուս Քրիստոսն է: «Ես որն (վաղն) եմ
 և դուք զիսկ, ասում է նա իւր վերջի խօսակցութեան մէջ առա-
 լոց հետ. «Ես որ ինչպէս եմ հասարակաց և ես նրանում, նա լսու պարտէ Բերս»
 (Յովհ. ԺԻ. 5): Եւ այս ասածէ ոչ միմիայն առաքելոց, այլև առ-
 հասարակ հաւատացելոց համար, ինչ ժամանակների և ինչ ազգե-
 րից լինին նրանք: Ու ինչ որ այն նրանց համար եմ ազաւան, այլև ամենին համար, որ
 «նրանց խօսումն կհասարակն ինչ: Որ ամենին մին լինին, ինչպէս որ դու Հայր ինչպէս ես և
 լին փոքանում, որ և նրանք մեզանում լինին. . . . Ես այն փոքուն, որ ինչ որսեր, նրանց որսեր,
 «որ մին լինին, ինչպէս որ և մեք մին ենք: Ես նրանցում և դու ինչպէս, որ մին մեզ իս-
 «րարեալ լինին»: (Յովհ. ԺԷ. 20—23): Այս խօսքերիցս, ասէք ճշ-
 մարտութեամբ, երևում է յայտի, որ Քրիստոս մեր Տէրը պարզ
 ցոյց է տալիս ոչ թէ անհատական միութիւն ինչ միայն մի հով-
 ուրի վերաբերեալ, ինչպէս դուք պապադաւանքի հաւատացնում
 էք մեզ Հռովմայ հայրապետի մասին, այլ հաւաքական միութիւն
 հովիւներին, ասելովն յոգնակի բառերովն «նրանց խօսումն, ամենին մե
 «նին և այլն»: Ապա ասէք, կարելի է միթէ, որ մարդս մինչև անգամ
 երեսակայութեամբ կարող լինի ձեռնարկել ինքեան այլ ևս աւելի
 և առաւել կատարելագոյն միութիւն, քան թէ այն, որ տալիս է
 իւր եկեղեցւոյն ինքն իսկ նրան Աստուածային զուխն. կարող է
 միթէ հաւասարիլ այս միութեան հետ այն բռնադատ և այսպէս
 ասել, մեքենական միութիւնը, որով պարծենում է Հռովմայ եկե-
 ղեցին: Յանկանում էք աւելի ևս բացայայտ տեսնել եկեղեցւոյ մի-
 ութիւնը և այն կապակցութիւնը, որովք անքակ ու անբա-
 ժան միաւորուած են նրա բազմատեսակ անդամներն: Ահա կար-
 դացէք: «Մին մարմին և մին հոգի, ինչպէս որ և իսկուսեցաք ձեր իսկուսե
 յոսոց մեջ: Մին
 «Տէրէ, մին հասարակ, մին միբարութիւն: Մին Աստուած և ամենին Հայր»: (Եփես. Դ. 4—6)
 «Մեք շարերս մին մարմին ենք փրկութեանում, բայց ամեն միմեքս միմեանց հետ անբաժ
 «Հռովմ. ԺԲ. 5) . . . որովհետև մի հոց (է), մեք շարերս մին մարմին ենք, ինչպէս որ
 «Մեք այն մին հոցիցն ենք լսում: (Ա. Կորն. Ժ. 17) . . . մեք ամենին մին հոգում
 «միբարութեան, մին մարմին լինելոց, ինչ հրեայ, ինչ հեթանոս . . . մեք մին հոգի եւ-
 «մեցին»: Նոյն ԺԲ. 13): Ես մտադիր եմ յետոյ խօսելոյ մանրամաս-
 նաբար եկեղեցւոյ միութեան մասին, իսկ այժմ իմ նպատակը մի-
 այն այն է, որ ցոյց տամ ձեզ, թէ սուրբն Պետրոս չէ նշանակ-
 ուած զուխ եկեղեցւոյ, յաջորդ Յիսուսի Քրիստոսի և թէ ոչ սուրբն

Պաւղոս և ոչ այլ ոք առաքեալներից չէ վերաբերել կամ սեպ-
հականել նրան այս բարձր պաշտօնը:

Գուք գուցէ ևս կասէք, թէ սուրբն Պաւղոս ցոյց է տուել Պետ-
րոսին առանձին պատիւ. նա դիտմամբ գնացել էր Երուսաղէմ, որ
տեսնէ Պետրոսին (Գաղ. Ա. 18): Ճշմարիտ է, նա չափազանց
յարգում էր սուրբ Պետրոսին (և կարելի էր ուրիշ կերպ լինէր),
անուանեց նրան եկեղեցւոյ սիւներից մինը: Բայց ոչինչ տեղից չէ
երևում, թէ սուրբն Պաւղոս նրան համարած լինի իւրեան ուսու-
ցիչ, իշխան, զլուխ և կամ պարզն ասեմ, իւրեանից բարձր: Ընդ
հակառակն նա բացայայտ անուանում է ինքն իւրեան այնպէս
առաքեալ, որ ստացել է այս բարձր պաշտօնը «և (թէ) հարբանցեց
և ոչ (թէ) հարբայ յերևակ» (ապա և ոչ Պետրոսից և ոչ Պետրոսի
ձեռնով), այլ Յիսուսի Քրիստոսի յերևակ և Հօր Աստուծոյ, որ հրած արեւելցն յարս-
«լիւն գոտան նրան» (Գաղ. Ա. 1): Նա ինքն է ասում, թէ նրան տու-
վաւ այնպիսի շնորհք և այնպիսի իսկ պաշտօն, ինչպէս և Պետ-
րոսին. միայն նրան հաւատացուած (յանձնուած) է քարոզել հեթա-
նասաց, իսկ Պետրոսին թլփատածներին: (Գաղ. Բ. 7—9. Հռովմ.
ԺԱ. Գործ. Բ): Ուրիշ տեղ նա ինքն սուրբ Պաւղոս նմանապէս
դրում է (Բ. Կորնթ. ԻԱ. 5. ԺԲ. 11). բայց ես այսպէս եմ հա-
մարում, թէ ոչինչ մի բանով պակաս չեմ քան թէ այնչաւ (ծայ-
րագոյն) առաքեալները ուր ասելովն, «նէ կէ լու» (կամ ըստ Յուն.
ժոյրոգոյն), յայտնի խմացնում է և Պետրոսին. իսկ «նէ կէ կէ լու»
խօսքերովը մէջ է բերում և յառաջնութեան պատիւը կամ գըլ-
խաւորութիւնը: Ահա, եթէ այս բոլոր մեր ասած ճշմարտութիւն-
ները ընդունում է բարեխղճութեամբ Հռովմայ եկեղեցին և եթէ
նա չընկնի ունայն մտածմանց ետեէն միապետական իշխանու-
թեան մասին, ապա ի հարկէ, կհամարէր իւրեան տնկող և առա-
ջին եպիսկոպոսը ոչ միայն Պետրոսին, այլ առաւելապէս Պաւ-
ղոսին: Մի մտանաք և այն, որ միայն իսկ սուրբ Պաւղոսն ան-
միջապէս Քրիստոսից երկնքիցն կանչուեցաւ առաքելութեան պաշ-
տօնին (Գործ. Գ.) միմիայն նա քաջուեցաւ դէպի երրորդ երկին-
քը (Բ. Կորնթ. ԺԲ.) հոգս քաջեց ամէն եկեղեցիների վրայ,
աշխատեց աւելի քան թէ միւս առաքեալքն (Ա. Կորնթ. ԺԵ.

Բ. Կորնթ. ԺԱ.) և ամէնից աւել գրեց շատ թղթեր, ինչպէս և
 Հռովմայեցւոց վրայ, որ լցուած է ամենախորին վարդապետու-
 թեամբ և որոյ մէջն միանգամայն և չէ յիշած Պետրոսի անունը (*):
 Իսկ սա գրեց միայն երկու թուղթ և այն հրէից վրայ, որ ցըր-
 ուած էին փոքր Ասիայի զանազան գաւառաց մէջ և ոչ մի բան
 չի ասում Հռովմայեցւոց մասին. նա գովութեամբ յիշատակում է
 Պաւղոսի գրած թղթերը և անուանում է նրան իւրեան սիրելի
 եղբայր, որ գրեց «Աստուածանէց նրան ասած իմաստութեան պէ», և մեղա-
 գրում է նրանց, որ ծուռ ու սխալ են հասկանում նրա թղթերը,
 ինչպէս և միւս սուրբ գրքերը. (Բ. Պետ. Գ. 15—16):

Չեմ կարող չդարձնել ձեր ուշադրութիւնը այլև դէպի այն գե-
 ղեցիկ կանոնը, որ սովորացնում է սուրբն Պետրոս եկեղեցւոյ հով-
 ուացն: «Որե՞նք երեցնե՞րէն ազաւստ եմ, ինչպէ՞ս մե՞ երեցընիւր և Քրիստոսի շարժարանի
 աներէն վկայ ևս և այն նոր Գալա (և) յայտնելու փարսացն ճասնակից: Աստուածայրէ՛ք
 Աստուածայ
 հօրն, որ յեղձօրէ, որ վերահացաւ լինէ՛ք, ոչ թէ ախմայ, այլ յօժար իմե՛ք Աստուծայ
 «Կոստի» պէս, ոչ թէ պէղծ շահատիրութեամբ, այլ յօժարութեամբ: Ոչ թէ ինչպէ՞ս թեմերէն վրայ
 որբարպետելու, այլ հօրէն օրինակ լինելու: Որ երբ որ հոգւաւորն (Յիսուս Քրիստոսն)
 էրեւէ», այն անթառամ փարսաց պատելն ընդունէ՛ք (Ա. Պետ. Ե. 1—4):
 Չասելով ոչինչ այն մասին, որ Հռովմայ եկեղեցւոյ այժմեան կա-
 ուավարութեան ոգին նմանութեամբ շատ հեռի է սրբոյ Պետրոսի
 գրած խրատներին, ևս մասնաւորապէս դարձնում եմ ձեր մտա-
 դրութիւնը դէպի այն, որով հաստատում է մեծ առաքեալն խը-
 րատ տալոյ համար իւր ունեցած իրաւունքը: Նա չէ հրամայում,
 այլ աղաչում է, չէ ասում ևս եւմ առաջինն առաքելոց, ևս տեղա-
 կալ և յաջորդ Յիսուսի Քրիստոսին, վասնորոյ լսեցէք ինձ. բայց
 խնդրում է, որ ուշադրութիւն դարձնեն և հաւատան նրա խօս-
 քերին, որովհետև նա ծեր է, ականատես վկայ է եղել Քրիստոսի
 շարժարանացն և յոյս ունի բոլոր հաւատացելոց հետ ստանալ հա-
 սարակաց Հովուապետից (Քրիստոսից) փառաց պսակը: Ահա, մի-
 թէ այս ձևով են խօսում Հռովմայեցւոց քահանայապետքն. դա-
 տեցէք ինքներդ :

(*) Այս մասին աղամայ խոստովանումէ Պեւրմիէնոս (յաղագս հայրապետաց Հը-
 ուովմայ Գր Ա. Գ. Բ.) ասելով՝ Պաւղոս առաքեալն աւելի շատ օգտակար եղև
 եկեղեցւոյն. քան թէ Պետրոսն:


Առանձին ազգու կերպով ուրբ Պաւղոս բացաղբից առաքե-
 լոց միմեանց հետ համահաւասար լինելոյ մասին վարդապետու-
 թիւնը այն պիտուածունն, որ թոյլ տուաւ վերին նախախնամու-
 թիւնն, ի հարկէ, ոչ առանց իմաստուն նախասակի: Աորնթոսունն
 դանազան առաքեալներոյ մկրտուած քրիստոնէից մէջ նախան-
 ձաւորութիւն ծաղեց այն մասին, «որ ոմն ասում էր՝ թէ ես Պաւ-
 ղոսեան եմ և մինը՝ թէ ես Ապօղոսեան, և միւսն՝ թէ ես Աեփա-
 սեան և ուրիշն՝ թէ ես Քրիստոսեան»: Որոց սասախի ձևով յան-
 դիմանութիւն է տալիս այս պատճառաւ Պաւղոս առաքեալն, ա-
 սելով, «այս սքեմն բաժանած է Բրիտան», Բ՛նէ Պաւղոս Իսաւրեցաւ յեւ համար,
 Իմ Պաւղոսն՝ անամբ ճրտեցաւ: (Ա. Կորթ. Ա. 12, 13,) Ապա ս՛լ է Պաւղոսն Իմ
 ս՛լ է Ապոստոն: Պաւղոսեաներ (և ն), որ նրանց յերսէ հասարակէ . . . Ինչաւ որ
 սլ սլ սքեմն հիմունք չէ իտող որնէլ Կաննէ նա՝ որ Բրիտանն է, որ է Յիսուս Բրիտանն
 (Ա. Կորնթ. Գ. 4, 5, և 11.) Նրանց է ես ասում սուրբն Պաւղոս.
 սքեմն չէնէ որ մորդիանցից (մորդիանցիւ) Բնն պարծեմայ: Պարմար, որ սքեմն բան յերն է.
 Բէ Պաւղոս, Բէ Ապոստոս, Բէ Աեփոս (Պերթոս), Բէ աշխարհ, Բէ կեանք, Բէ մահ,
 Բէ այժմ եղած և Բէ նոր Գալաց Բաները, սքեմն բան յերն է: Դաս Բրիտանն (էք) և
 Բրիտանն Ապոստոսն: (Ա. Կորթ. Գ. 21, 23,) Սյս ասացուած քն
 այնքան պարզ հասկանալի են մինչև անդամ և մեկնութեան ոչ
 ինչ հարկաւորութիւն չկայ. այն ասացուցութիւնքն, որ բացա-
 ւորուած են նրանց մէջ, այն սատիճանի վճռողական են, որ
 ոչ ինչ հերքումն չէ կարող լինիլ: Վասն որոյ ես այս կարճառօտ
 խօսակցութեամբս վերջացնելով իմ քննարանութիւնը սրբոյն Պետ-
 րոսի մասին կամ ձեր հաշակաւոր հաւաքարանութեան վիրայ,
 աւելորդ չեմ համարում ասել, որ դուք սուրբ գրքից ասացու-
 ցութիւն բերելոյ ժամանակին, չնայելով ձեր ծուռ հասկանալոյն,
 այն վկայարանութիւնները համարձակ խօսում էք, թէ Քրիկիշն մեր
 Յիսուս Քրիստոս ինքն յանձնեց սրբոյն Պետրոսի մեծութիւն և
 պաշտօն դասաւորի բոլոր առաքելոց և ընդհանրական եկեղե-
 ցոյ վերայ: Բայց կարդալով այս իմ համառօտ քննարանութիւնը,
 որ ձեր երկար գրուածոց պատասխանին է՝ ասէք բարեխիղճ դա-
 տողութեամբ, հաստատեցիք սուրբ գրոց վկայութեամբն ինչ որ
 մտադիր էիք ասացուցանելոյ: Ո՛չ. ամենևին ոչ. և ես պատրաստ
 եմ Տէրի սուրբ սեղանի և բոլոր եկեղեցոյ առաջին վկայելոյ, որ

դուք ոչ ինչ չէք հաստատել և հաստատութեան բոլորովին հնար
չունիք: Աստուծոյ է հերքել այն, ինչ որ ասացի ընդդէմ ձեզ: Յիսոք
բերէք, որ ծուռ մեկնելն Աստուծոյ խօսքերը, մանաւանդ թէ
դիտմամբ՝ չէ հասարակ սխալումնք դիտնականի, այլ բարոյական
յանդամք ու մեղք: Զգոյշ կացէք, որ ձեր վիճմանց մտիկ են տա-
լիս ոչ միայն ձեր բարեկամք և համախոհքն, այլ և առհասարակ
ձեր թշնամիք և հակառակորդքն: Եթէ սատանային հաճելի է տես-
նել փոխադարձ բաժանմունքը և թշնամութիւնը քրիստոնէից,
ապա անհատատացիւոց և ազատականաց համար շատ ուրախու-
թիւն կլինի տեսնել, ինչպէս քրիստոնեայքն վիրաւորում են մի-
միանց այնպիսի սրով, որ պէտք էր վնիղ նրանց համար փոխա-
դարձ սիրոյ և խաղաղութեան կապ:

Ասանորոյ պարտականութիւն ենք համարում մեզ աղաչել ձեզ
եղբայրք, Յիսուսի Քրիստոսի անունովն, որ ամէնքդ միեւնոյն
խօսք ունենաք և հերձուածք չլինի ձեր մէջուան, որ և միեւնոյն
մտքի և մին կարծիքի մէջ հաստատուած լինիք (Ա. Կորնթ. Ա.
10): Մեք ամէնքս, որ Քրիստոսումն մկրտուեցանք, Քրիստոսին
հաղած ենք, շնորհութիւն չկայ, ոչ հրէի և ոչ հեթանոսի, ոչ ծա-
ւայի և ոչ աղասի, ոչ որձի և ոչ էզի, պատճառ որ մեք ամեն-
քըս մի ենք Քրիստոս Յիսուսումն (Գաղատ. Գ. 27—28. Ա.
Կորնթ. ԺԲ. 13.): Աղաչում ենք ձեզ, որ մտիկ տաք նրանց, որ
հերձուածք և դայթակողութիւն են շինում այն վարդապետութիւն-
նեցից դուքս, որ դուք սովորեցիք (սուրբ դրքից) և հեռու քա-
շուեցէք նրանցից: Պատճառ որ այնպիսիներն մեր Տէր Քրիս-
տոսին չեն ծառայում, բայց իրեանց փորին, և քաղցր խօսքերով
և օրհնութեամբ խաբում են անմեղների սրտերը: (Հռովմ. ԺԶ.
17. 18.): Այսուհետեւ աղայ չլինիք շփոթուած և այս ու այն
կողմ շարժուած վարդապետութեան ամէն քամիներին մարդ-
կանց խարերայութեամբն, որ խորամանկութեամբ խաբում են և
մոլորացնում են: Բայց ճշմարիտ լինիք սիրով և անէք ամեն բա-
նով նորանում, որ է դուրսն Քրիստոս: Գէն քցեցէք սուտ տ-
ակն: Խօսեցէք ճշմարտութիւնն մեզ հետ, որ ձեր ընկերներն ենք
և միմիանց անշամ (Եփես. Գ. 14—25: Եփր. ԺԳ. 9): Պահեցէք

(ձեզ տուած) ասանգր և յիս կայէք պիղծ և նորաձայն խօսքի-
 րիցն և սուտանուն ունող գիտութեան հակառակութիւննիրիցն:
 Ար նրան մի քանիսն ընդունեցին և հաւատքիցն թեքուեցան (խափ-
 ուեցան): Ա. Տիմոթ. Զ. 20—21): Ամէն խոնարհութեամբ և կր-
 կայնամտութեամբ իրար համբերենք սիրով: Զանք անենք հոգ-
 ւոյ միտքանութիւնը պահել խաղաղութեան կապով: Մի մար-
 մին և մի հոգի, ինչպէս որ և կոչուեցանք մեր կոչումի յուսոյ
 մէջ: Մի Տէր է, մի հաւատք, մի մկրտութիւն: Մի Աստուած և
 ամէնի հայր, որ ամէնի վրայ (է) ամէնի հետ և մեր ամենիս մէջն:
 Մեր ան մնն մինիս տուած շնորհքն Քրիստոսի պարգևաց չափին
 պէս, որ ամէնքն համենք հաւատքի մի միտքանութեան մէջ և
 Աստուծոյ որդւոյ գիտութեան մէջ և կատարեալ մարդ լինինք
 Քրիստոսի կատարեալ հասակի չափով (Եփես. Գ. 2—6. 13):
 որում Հօր և Սրբոյ Հոգւոյն հետ վայել են փառք, պատիւ և օրհ-
 նութիւն այժմ և յաւիտեանս ամէն:






ՎՐԻՊԱԿՔ ՏՊԱԳՐՈՒԹԵՍՆ ։

Երեւ	ՏՊ	ՍԻՄՎ	ՈՒՆԷՆ
1	9	բաղկացել	բաղկացրել
2	3 և 4	խնչն է	խնչ է
-	11	այլ և միայն	այլ միայն
3	6	չըղունել	չընղունել
4	13	և իշխողք	ղլուխ և իշխողք
-	26	իբ	իւբ
5	19	տուաւ	տուան
-	20	խոտաղաւ	խոտաղուաւ
7	8	արքայութիւն	արքայութիւնը
-	34	դիտում	դիտում
8	18	ցնրան	ճնրանց
-	23	հեղ	ձեղ
10	20	որոց	որոյ
11	23	Պարոսն	Պարոսն
12	23	Ղինոս	Ղինոսին
15	9	այլ ինչ իշխանութիւն	այլ ինչ զլիաւոր իշխանութիւն
17	3	խմաստասիրական	խմաստական
18	4	դորուլաղութ	դորուլաղութ և
-	15	այս	այն
-	24	արատութեամբ	արագութեամբ
19	10	այլ և այլ	այլ և այս
-	16	{ նրանցից	նրանից
-	30		
20	2	անում	որոնում
-	24	դալի	դալիս
21	15	հաւաքանարանութեամբ	հաւաքանարանութեան թելը շատ ձիգ հեռաւորութեամբ

Երև	Տող	Մտու	Ուղև
21	19	կանոնապատյոց	կանոնօք ստոյոց
22		վերջին հանդամանք	հանդամանք
24	2	Որբ	կորբ
-	7	ցուցութիւնից	հորապատկաւ ցուցութիւնից
-	20	և այն	և այլն
25	12	կրկնային	կրկնայեան
26	5	ինչպէս մարդ	ինչպէս բոլորովին մարդ
-	23	հասանելի	հասանելի
23	22	հաստատութեան	հաստատումն
29	16	որդիութիւն	որդիութիւնք
31 3 ^{1/2}	19	միւսմերի	միւսմերի
-	6	տեղեւում	տեղիւում
-	23	թուարկութիւն	թուարկութեան
33	3	բան	բնան
-	29	մեռնելոյ	մեռնելոյ
34	31	դործով	դործքով
35	25	կամենաք	կամենայիք
-		վերջին միւս	միւս առաքելոց
36	2	սուրբն	սուրբ
37	18	դիպուածներումն	դիպուածումն
-	31	որ որ	որ
38	9	առաքելաւքն	առաքելաւքն
-	30	քահանայսնայա- պետին	քահանայապետին
39	14	դիպուածքը	դիպուածը
-		այսպիսի	այնպիսի
42	3	ընդհանրական	ընդհանրական և
-	11	Պետրոսին	Պետրոսին և
-	29	օրտակեալ	օրէնադէտ
-		վերջին կէտիցեայ	կէտիցեայն
43	20 և 21	Աստուածաշնչի գեղեցիկ	Աստուածադրեցիկ

Երև	Տող	Մաս	Ուրիշ
44	3	համար էին	համար էին
-	14	կենդանի	կենդանի
-	16	Քրիստոսի	Քրիստոսի կենդանի
-	28	պետք էին	պետք է լինին
-	31	դառնում	դառնում
45	19	պաշտածունքի համար .	պաշտածունքի գործոց համար
-	30	կեանք ուղղութիւն . . .	կեանք և կանոնաւոր ուղ- ղութիւն
46	11	յայտի	յայտնի
-	14	հաւաքանիւն միութիւն	հաւաքանիւն կամ ժողովա- կան միութիւն
-	25	կոչումին	կոչումին մին
-	29	վախում	վայելում
48	14	դաշու (և) յայտնելու . . .	դաշուց (և) յայտնուելու
50	2	կարող է	կարող էք
-		վերջին կիր. Ժ. Գ. 9 . . .	(սխալ է և աւելորդ)
51	4	խոնարհութեամբ և կր- կայնամտութեամբ	խոնարհութեամբ և հեղու- թեամբ և կրկայնամտութեամբ
-	7	կոչումի	կոչումի մին
-	9	վրայ (է) ամէնի	վրայ (է) և ամէնի
-	11	ամէնքն	ամէնքս



1067-1069

15

2013

«Ազգային գրադարան»



NL0072588

պ. 3

«Ազգային գրադարան»



NL0072577

պ. 2

«Ազգային գրադարան»



NL0072589

պ. 1

